

առարակութիւն „Հայրենիք“-ի

ԼԵԶՆԻԴ ԱՆԴՐԵԼՎ

ԱՅԴՊԵՍ ԵՐ

ԹԱՐԳԱ. ՌՈՒՍԵՐԵՆՔ

Ա. Մ.

891.71
4-58

«ՀՕՅԲԵՆԻՔ»-Ի
ՏՊԱՐԱՆ

1911
ՊՈՍԹԸՆ

17 JUL 2005

18 NOV 00

- Գիւ-18, Հրատակութիւն „Հայրենիք“-ի

ԼԻՇԽԻԴ ԱՆԴՐԵԵՎ

ԱՅԴՊԵՍ ԷՐ

ԹԱՐԴՄ. ՌՈՒՍԵՐԵՆՔ
Ա. Ա.

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի
ՏՊԱՐԱՆ

1911
ՊՈՍՊԸՆ

12.02.2013

9855

ԱՅԴՊԵՍ ԷՐ

I

Հրապարակի վրայ մի հսկայ, ուե աշտարակ
էր բարձրանում՝ հաստ, բերդերին յատուկ պա-
տերով և հազւագիւտ մարտկոցային-պատու-
հաններով։ Նրան կառուցել էին իրենց համար
ասպետ-աւաղակներ, բայց ժամանակը արդէն
մաքրել էր նրանց։ աշտարակը կիսովին բան-
տի էր վերածւել՝ փտանդաւոր և կարեւոր ոճ-
րագործների համար, կիսովին էլ բնակավայր
էր եղել։ Խրաքանչիւր դարեշրջանում նրան
նոր չէնքեր էին կցում, թանձր պարիսպին՝ կամ
իրար սեղմում։ ու փոքր առ փոքր նա մի ամ-
բողջ փոքրիկ քաղաքի փոխւեց, ժայռի վրայ՝
ծինելոյների, մանր աշտարակների և սուր
անկիւնների մի անհաւասար անտառով։

Երբ արևմուտքում սկսում էր փայլատակել
կանաչորակ երկնակամարը և տեղ-տեղ՝ պատու-
հաններում՝ բարձր կամ ցածր վառւում էին
փոքրիկ կրակներ՝ աշտարակի ամբողջ մոայլ
զանդւածը ընդունում էր օտարոտի և ցնորա-
կան գծագրութիւններ, և յայտնի շէ թէ ին-
չո՛ւ, թւում էր, որ նրա ստորոտների մօտ ոչ
թէ սովորական մի սալայատակ էր ձգւում,



այլ մի ծով, անեղը, աղի ովկիանոս : Եւ միտքը դառնում էր դէպի անցեալը, վաղուց մեռած ու մոռացւած :

Աշտարակի վրայ չինւած էր մի հսկայ հին ժամացոյց, որ տեսնւում էր հեռուից : Նրա բարդ մեքենանները մի ամբողջ յարկ էին գրաւում, և հսկում էր նրան միտականի մի. մարդ, որին աւելի յարմար էր ոսպնեակի մէջ նայել : Այդ պատճառով էլ նա ժամագործ էր եղած և երկար մանր ժամացոցների ետևից ընկել, մինչև որ իրեն վստահած էին մեծ ժամացոյցը : Այդտեղ նա իրեն լաւ զգաց, և յաճախ՝ առանց պէտքն ունենալու, զիշեր թէց ցերեկ մտնում էր այն սենեակը . ուր դանդաղօրէն դառնում էին ժանիքաւոր անիւներն ու լծակները, և լայն սահուն թափով օդն էր ճեղքում հսկայ սլաքը : Իր ճօմման բարձրագոյն կէտին հասնելով՝ սլաքը խօսում էր .

— ԱՅԴՊէՍ է՛մ.... :

Թաւալւում էր, բարձրանում դարձեալ և աւելացնում .

— Այդպէս կը լինի . այդպէս էր — այդպէս կը լինի . այդպէս էր — այդպէս կը լինի :

Այդ բառերով էր ըմբռնում միտականի ժամագործը սլաքի միօրինակ և խորհրդաւոր զարկը : Մեծ ժամացոյցին մօտիկ գտնւելով՝ նա փիլսոփայ էր դարձել, ինչպէս պատմում էին այն ժամանակ :

Հին քաղաքի վրայ, ուր աշտարակն էր բարձրանում, և ամբողջ երկրի վրայ վերամբարձ կանգնած էր մի մարդ, քաղաքի և երկրի մի առեղծւածային տիրապետող — մէկը միլիոնների վրայ, և նրա խորհրդաւոր իշխանու-

թիւնը նոյնքան հին էր, որքան ինքը քաղաքը : Նա թագաւոր էր կոչւում և կրում էր մի անձական — «Քսաներորդ», իր համանուն նախորդների թւով — բայց այդ ոչինչ չէր բացարում : Ինչպէս ոչոքին յայտնի չէր քաղաքի ծագումը՝ այնպէս էլ ոչոք չգիտէր այդ օտարոտի իշխանութեան սկզբնաւորութիւնը, և որքան ներելի էր մարդկային յիշողութեան՝ ամենաշին անցեալի մէջ դարձեալ նոյն առեղծւածային կերպարանքն էր ցցւում — մէկը ; որ հրամայում է միլիոններին : Գոյութիւն ունէր մի համր անցեալ, որի վրայ յիշողութիւնը այլևս իշխանութիւն չունէր . բայց նա էլ երբեմն բանում էր իր շրթունքները, գուրս էր նետում մի քար, մի փոքրիկ տախտակ, ծածկւած ինչ որ նշաններով, կամ մի կոթողի բեկոր, կործանւած պարիսպից մի աղիւս — այդ նշաններում պատկերացւած էր այն մէկի պատմւածքը, որ միլիոններին էր հրամայում : Փոփւում էին տիտղոսները, անուններն ու ածականները, սակայն պատկերը մնում էր անփոփոխ, կարծես անմահ : Այն բանով, որ թագաւորը ծնւում էր, և մեռնում, ինչպէս նաև ամէնքը, որ իր կերպարանքն ունէին՝ յատուկ իւրաքանչիւր մարդուն՝ կարելի էր իմանալ, որ նա մարդ էր . բայց երբ երեակայում էին այն անչափելի մեծութիւնը ոյժի և իշխանութեան, որ նրա ձեռքն էին՝ այն ժամանակ դիւրին էր մտածել, որ նա մի Աստւած էր : Եւ այդ՝ ևս առաւել, որովհետեւ Աստւածն էլ մարդու կերպարան քով էր ներկայացւում ; և այդ չէր խանգարում նրան միանգամայն տարեր, անհասանելի էակ լինելուն :

Քաներորդը մի թագաւոր էր։ Այդ նշանակում էր, որ նա կարող էր ամէն մէկին երջանկացնել կամ դժբախտացնել։ Կարող էր խլել ստացւածքը, առողջութիւնը, ազատութիւնը, կեանքը նոյն իսկ։ Նրա մէկ խօսքով տասնեակ հազարաւորներ գնում էին պատերազմ, սպանելու և մեանելու։ Նրա անունով գործուում էր արդարութիւն և անարդարութիւն, բարիք և չարիք, անգիտութիւն և ողորմութիւն։ Եւ նրա օրէնքները նւազ հրամայող չէին, և ան նոյն ինքն Աստուծոյ օրէնքները։ և աւելի ևս մեծ էր, որովհեաւ Աստած երբէք չէ փոխում իր օրէնքները, իսկ նա կարող էր այդ անել ուղած միջոցին։ Հեռու կամ մօտ՝ նա միշտ կեանքի վրայ էր կանգնած։ մարդը՝ ծնւելով՝ բնութեան, քաղաքների ու գրքերի հետ տեսնում էր նաև թագաւորին։ մեռնելով՝ բնութեան, քաղաքների ու գրքերի հետ թողնում էր նաև թագաւորին։

Աշխարհի պատմութիւնը՝ բերանացի թէ գրաւոր՝ օրինակներ ունէր՝ վեհանձն, արդարադատ ու բարի թագաւորների, և թէև ամէն ժամանակ էլ պատահում էին լաւ մարդիկ, քան թէ նրանք՝ այնուամենայնիւ հասկանալի էր դառնում, թէ ինչո՛ւ էին նրանք հրամայում, Բայց յաճախ պատահում էր, որ թագաւորը աշխարհի ամենավատ մէկն էր լինում, առաքինութիւններից զուրկ, անզութ, անարդար, մինչև իսկ խելագար։ բայց և այն ժամանակ նա նոյն առեղծւածային մէկն էր մնում, նա, որ հրամայում էր միլիոններին։ և նրա տիրապետութիւնը մեծանում էր իր գործած ոճիրների հետ։ Նրան ատում էին ամէնքը և անիծում,

իսկ նա միայնակ հրամայում էր բոլոր իրեն ատողներին և անիծողներին, և այդ վայրագ տիրապետութիւնը դառնում էր մի առեղծւած, և մարդու երկիւղին՝ մարդուն առջև՝ միախառնում էր մի միստիքական սնյայսութեան զարկուրանք։ Իսկ դրանից ծագում էր այն, որ իմաստութիւնը, առաքինութիւնն ու մարդկայնութիւնը թուլացնում էին իշխանութիւնը և նրան վիճելի էին դարձնում, իսկ բռնապետութիւնը, անմտութիւնն ու չարութիւնը ամրացնում էին նրան։ Դրանից ծագում էր այն ևս, որ ստեղծագործութիւնն ու բարութիւնը տեղ չէին գտնում այդ առեղծւածային տիրապետողների մօտ, իսկ կործանման և չարագործութեան մէջ նրանցից ամենասկարն անգամ գերազանցում էր սատանային և դժոխային բոլոր ոյժերին։ Նա չէր կարող կենդանացնել, բայց սպանում էր շարունակ ինելագարութեան, մահւան և չարիքի այդ խորհրդաւոր ուխտեալը։ և ո՛րքան բարձր էր լիհում նրա գակը՝ այնքան շատ մարդկային սոսկորներ էին դնուում նրա հիմքերի տակ։

Եւ միւս հարևան երկրներում նոյնպէս բազմած էին իրենց գահերի վրայ տիրապետողներ, և նրանց իշխանութիւնը ձուլում էր ժամանակների անհունութեան մէջ։ Լինում էին տարիներ ու դարեր, երբ թագաւորութիւններից որեւէ մէկում չքանում էր իր խորհրդաւոր իշխանաւորը, բայց տակաւին երբէք չէր պատահած, որ ամբողջ աշխարհը նրանցից մաքրւէր։ Իսկ յետոյ անցնում էին դարեր, և կրկին, յայտնի չէ թէ որտեղից՝ յայտնում էր այնտեղ մի գահ, և կրկին բազմում էր նրա վրա

առեղծւածային մէկը, ա հասանելի՝ անզօրութեան ու անմահ կարողութեան մի ձուլման մէջ։ Եւ իր խորհրդաւորութեամբ նա հմայում էր մարդկանց։ ամէն ժամանակներում էլ պատահում էին այնպիսիներ, — և նրանք շատ էին — որոնք սիրում էին նրան աւելի քան սեփական անձը, աւելի՝ քան իրենց կանանց ու մանուկներին, և հնագանդութեամբ, ինչպէս Աստուծոյ ձեռքից՝ ընդունում էին նրանից և նրանունով ամենանողորմ ու անարգ մահը։

Քսաներորդն ու իր նախնիները շատ հազիւ էին երեւում իրենց ժողովրդին և շատ քչերն էին նրանց տեսնում, բայց նրանք ամէնքը սիրում էին ժողովրդին նւիրել իրենց պատկերները, ձուլելով դրամի վրայ, քանդակելով քարերից, տպագրելով անհամար քանի անների վրայ, և ամէն տեղ զարդարելով ու զարդացնելով նրանց գեղարւեստական իմաստներով։ Անկարելի էր մի քայլ գործել, առանց նոյն դէմքը տեսնելու — նոյն պարզ ու առեղծւածային դէմքը, որ իր բազմաթւութեամբ բռնի գրաւում էր մարդկանց յիշողութիւնը, իշխում երեակայութեան վրայ, երեւթապէս ամենուրեք դառնում, ինչպէս որ սրդէն անմահ էր դարձել։ Եւ այդ պատճառով՝ մարդիկ, որոնք հազիւ էին յիշում իրենց պապին, ամենին չէին յիշում իրենց մեծ պապին՝ շատ լաւ ճանաչում էին այն իշխանաւորին, որ ապրել էր հարիւր, երկու հարիւր, հազար տարի առաջ։ Եւ նոյն պատճառով, որքան և հասարակ էր այն մէկի դէմքը, որ միլիոններին էր համայում բայց և նրա վրայ դրումւած էր մի խորհրդաւորութեան ու սոսկալի առեղծւածքի

կնիքը։ Նոյնչափ անբացատրելի և նշանակալից է թւում նաև մեռեալի դէմքը, որովհետեւ նրա ծանօթ, ընտանի գծագրութիւնների միջից նայում է ինքը՝ խորհրդաւոր ու հզօր մահը։

Այդքան բարձր էր կանգնած թագաւորը կեանքի վրայ։ Մարդիկ մեռնում էին և երկրից ամբողջ սերունդներ էին անհետանում, իսկ նրա մականունները միայն փոխում էին օձի կաշւի պէս։ տասնեմէկերորդին յաջորդում էր տասներկուերորդ, այնուհետև տասնեւհին գերորդ, յետոյ կրկին առաջին, հինգերորդ, երկրորդ։ — և այդ սառն թւերում հնչում էր մի անխուսափելիութեան ծայն, ինչպէս ըոպէները ցուցադրող սլաքի զարկը։

— Այդպէս էր — այդպէս կը լինի։

II

Եւ պատահեց որ լայնածաւալ թագաւորութեան մէջ, որի տէրն էր Քսաներորդը՝ յեղափոխութիւն ծագեց — նոյնքան խորհրդաւոր ըմբոստութիւնը միլիոնաւուրելի՝ որք ու խորհրդաւոր։ Էր մէկի տիրապեսութիւնը։ Ինչ որ տարօրինակ բան անցաւ այն կապերի մէջն, որ միացնում էին թագաւորին ժողովրդի հետ — և նրանք սկսեցին քակւել՝ անշշուկ, աննկատելի, գաղտնածածուկ — ինչպէս դիակի մէջ, որին ձգած է կեանքը և սկսած են նրանում գործել նոր, յայտնի չէ թէ ուր թագնւած ոյժեր։ Տակաւին նոյնն էին գահն ու պալատը, նոյնն էր Քսաներորդը — սակայն իշխանութիւնը աննկատելիօրէն մեռած էր և ոչ ոք չզիտէր

նրա մահւան ժամը, և ամէնքը կարծում էին թէ նա հիւանդ էր միայն։ Ժողովուրդը կորցրեց հնազանդւելու վարժութիւնը -- այդքանը միայն -- և յանկարծակի, բազմաթիւ մանր, մասնակի, աննշմարելի բռնկումներից յետոյ աճել էր մի հսկայ, անպարտւելի շարժում։ Եւ հէնց որ նա դադարեց այլևս հնազանդւել, միանգամից բացւեցին նրա բոյոր հինաւուց, բազմադարեան խոցերը, և զայրոյթով զգաց իր քաղցը, անարդարութիւնն ու ճշումը։ Եւ աղաղակեց նրանց դէմ։ Եւ արդարութիւն պահանջեց։ Եւ յանկարծ ցցւեց հսկայ, ամեհի գաղանը, իր սանձաթող մոլեգնութեան մէկ բոպէի մէջ իր բռնակալից վրէժը լուծելու, երկար տարիների նւաստացման ու տառապանքների համար։

Ինչպէս որ չէին համոզւում միլիօնաւորները հնազանդ մնալու, նոյնպէս չէին համոզւում ապստամբւելու համար։ Բայց յանկարծ ըմբոստութիւնը ամէն կողմերից դէպի պալատը հոսեց։ Ապշած իրենք իրենց վրայ և իրենց գործերից, մոռանալով անցած ճանապարհը, մարդիկ աւելի ու աւելի մօտենում էին գահին, արդէն ձեռքերով չոշափում էին նրա քանդակներն ու ուկեզօծ զարդարանքները։ արդէն սկսած էին արքայական ննջարանի ներսը նայել և փորձում էին թագաւորի աթոռների վրայ բազմել։ Թագաւորը բարեկում էր և թագուհին ժապում, իսկ շատերը ժողովրդից՝ զգացւած յաց էին լինում, այդքան իրենց մօտաեսնելով Քսաներորդին։ Կանայք զգոյչ մատներով շոյում էին արքայական զգեստների մետաքսը և պարեգօտի թաւիչը։ աղամարդիկ

բարեսիրտ դաժանութեամբ զւարձացնում էին թագաւորի երեխային։

Թագաւորը բարեկում էր, գունատ թագուհին ժպտում, իսկ հարեան սենեակից սողում էր, դրան տակով՝ ինքնասպան եղած մի ազնւականի արեան փոքրիկ, սև վտակ։ Նա չէր կարողացել դիմանալ, երբ թագաւորի պարեգօտինքսւել էին մէկի աղտոտ մատները — և ինքնասպան էր եղել։ Եւ հեռանալով՝ «զողում էին».

— Կեցցէ՛ Քսաներորդը . . .

Ծիծաղում էին։ Իսկ երեկոյեան՝ դէմքելը մոռայլ էին և հայեացքները կասկածու։ Ի՞նչպէս կարողացել էին նրանք հաւսսալ նրան, որ հազարաւոր տարիներ դիւային նենգամսութեամբ խաբել էր իր գիւրահաւատ և բարեսիրտ ժողովրդին։ Պալասում մութ լի և մէծ պատուհանները փայլում էին մի կեղծ երեցթով և նայում էին դաժանօյ էն։ Այն եղ լիչ որ բան են ծրագրում։ Այն սեղ կօիադութիւններով են զրազւած։ Այն սեղ հսկում է խաւարը և նրա միջից զուրս կանչում դահճներին ժողովրդի գլխին։ Այն սեղ զգւանչով սրբում են իրենց շրթունքները դաւաճան համբոյրներից յետոյ, և լւանում են երեխային, որին չօշափելով պղծել էր ժողովրդին։ Իւրես այնտեղ ոչ ոք էլ չկայ։ Թերես հսկայ, սև դահճներում միտյն լնքնսասաւ սղւաւէ ոչ է մնացել — պարապ է ամէն լինչ նլանք վախան։ Պէ՛տք է աղաղակել, պէ՛տք է դուրս կանչել նրան — եթէ միայն այլ սեղ կենդանի մնացած մէկը կայ։

— Կեցցէ՛ Քսաներորդը . . .

Գիշերային գունատ, չփոթւած երկինքը
նայում է դալուկ դէմքերին, որոնք դէպի վեր
են դարձւած. հալւելով՝ շտապ վազում են վա-
խեցած ամպերը, և կեղծ, առեծւածային մե-
ռելական ցոլմունքով շողշողում են հսկայածե-
լուսամուտները:

— Կեցցէ՛ Քսաներորդը . . . :

Մի պահակ իր դիրքեց հանւելով՝ մոլորւել
է ամբոխի մէջ. նա կորցրեց իր հրացանը և
ժպտում է այժմ. ինչպէս տենդի մէջ՝ զիլ ձայ-
նով ճռճռում են դռների երկաթէ փականները.
ցանկապատի բարձր, երկու թէ ձողերի վրայ ինչ
որ սե, հրէշակերպ պտուղների պէս կախւած
են կորացած իրաններ, բազկատարած ձեռքեր,
գունատ՝ երկնքի, և գորչ՝ գետնի պատճառով։
Ամպերի մի կոյտ է սաւառնում, դէպի ներքե-
նայելով։ Աղաղակներ։ Զահ է վառում մէկը և
մշուշապատում են պալատի լուսս մուսնէլը,
լցում արիւնով և մօտենում ամբոխին։ Ինչ որ
բան պատերի վրայ սկսեց սողալ և բարձրանալ
տանիքի վրայ։ Լուռ է դղեակը։ Ցանկապատը
ամբողջովին ծածկւեց մարդկանցով, և յանկարծ
չքացաւ, և հարթացած տարածութեան վրայ
սկսեց ժողովուրդը շարժւել։

— Կեցցէ՛ Քսաներորդը . . . :

Պատուհանների ետև թթուացին սժզոյն
կրակներ։ ապակիին հպւեցաւ մէկի այլանդակ
դէմքը և կորաւ դարձեալ։ Սկսում է հետզե-
տէ լուսաւորւել։ Լոյսերը մեծանում են, բազ-
մապատկւում, առաջ ու յետ շարժւում, մի ք-
ատրութի պարի կամ թափօրի նման։ Յետոյ լոյ-
սերը միախառնուում են, բարեւում։ պատշամի
վրայ են դուրս գալիս թագաւորն ու թագու-

հին։ Նրանց ետևը լոյս է, բայց դէմքերը մութ
են. թերեւ նոյն իսկ նրանք չեն . . .

— Լոյս, Քսաներորդ, լոյս . . . Մենք քեզ
չենք տեսնում։

Կողքերից լոյսեր ցայտեցին և կարծես ծխա-
պատ քարայրի միջից երկու շառագունած, տա-
տանւող դէմքեր առաջ անցան։ Հեռաւոր շար-
քերում ողբեր բարձրացան։

— Սրանք չե՞ն . . . թագաւորը փախա՛ծ է։

Բայց մօտիկ կանգնած մէկը արդէն աղա-
ղակում է, երկիւղից սթափւածի ձայնով։

— Կեցցէ՛ Քսաներորդը . . . :

Շառագունած դէմքերը դանդաղօրէն վար
ու վեր են շարժւում, երբեմն փայլելով պայ-
ծառ-բռնորագոյն չողերի մէջ, երբեմն ստւեր-
ների հետ ձուլւելով։ Այդ նրանք է որ բարե-
ւում են ժողովրդին։ Ժողովրդին են բարեւում
տասներիններորդը, շորրորդը, երկրորդը։ Կար-
միր ծուխերի միջից բարեւ են տալիս այն առ-
եղծւածայրն էակները, որոնք այնչափ անըմբռ-
նելի, գրեթէ աստւածային ոյժ ունեն։ Նրանք,
որոնց հետ, նոյնչափ կարմիր-ծխապատ անցեա-
լի մէջ թաղւած են սպաննութիւններ, գլխա-
տումներ, մեծութիւնն ու երկիւղը։ Պէտք է,
որ նա խօսի. մարդկային ձայնն է պէտք. երբ
նա լուռ է և իր հրեղէն դէմքով ժողովր-
դին է բարեւում, սոսկալի է նրան նայել, ինչ-
պէս դժոխքից դուրս կանչւած սատանային։

— Խօսի՛ր, Քսաներորդ, խօսիր . . . :

Զեռքի մի սարսափելի շարժում, որ լառւ-
թեան էր հրաւիրում — տարօրինակ, հրամայոզ
շարժում, այնքան հին որքան ինքը իշխանու-
թիւնը. և մի անծանօթ, հանդարտ ձայն, որ

ամրոխին է շպռտում հինաւուրց տարօրին և կ
բառերը.

— Ես ուրախ եմ իմ բարի ժողովուրդը տես-
նելով . . .

Եւ այդքա՞ն միայն : Սակայն միթէ քիչ է
այս : Նա ուրախ է : Քսաներորդը ուրախ է :
Մի՞ զայրացիր մեզ վրայ, Քսաներորդ : Մենք
սիրում ենք քեզ, Քսաներորդ . դուն էլ մեզ
սիրիր : Եթէ դուն մեզ չես սիրելու՝ մենք
դարձեալ կը գանք առանձնաբանդ մանելու,
ուր աշխատում ես, ճաշասենեակդ, ուր կերա-
կուր ես ուտում, ննջարանդ՝ ուր քնում ես —
և կը ստիպենք, որ սիրես մեզ :

— Կեցցէ՛ Քսաներորդը, Կեցցէ՛ թագաւորը,
Կեցցէ տէրը . . .

— Ստրուկնե՛ր . . .


Այդ ո՞վ ասաց «ստրուկներ» . . .

Զահերը մարում են : Հեռանում են նրանք :
Դէպի ետ են շարժւում տժգոյն լոյսերը և պա-
տուհանները մութի մէջ են մնում, ծածկում
են մշուշով, արիւնով լցւում և ամբոխի մէջ
փնտում մէկին : Վազում են, շուրջը նայելով
ամպերը : Արդեօք նա այստե՞ղ էր, թէ միայն
այնպէս թւեց : Հարկաւոր էր չօշափել նրան,
մատները դպցնել նրա հագուստին, նրա դէմ-
քին, եթէ նոյն իսկ վախից կամ ցաւից աղա-
ղակէր :

Լուռ հեռանում են նրանք, միախառնելով
առանձին բացականչութիւնները ոտքի դոփիւ-
նի հետ : Ամենքը լցւած են յիշողութիւննե-
րով, նախագացումով և սարսափով : Եւ ամ-
բողջ գիշեր քաղաքի վրայ են թափառում ինչ
որ չարագուշակ տեսիլներ . . .

III

Նա արդէն փորձեց փախչել : Նա դիւթեց
ոմանց, ուրիշներին քնեցրեց և զբեթէ մօտ էր
իր դիւալին ազատութեան՝ երբ հայրենիքի հա-
սատարիմ զաւակներից մէկը ճանաչեց նրան
աղտոտ սպասաւորի երեսութի սակ ծպտւած :
Զը վստահէլով իր յիշողութեան՝ նա նայեց մի
դրամի, որի վրայ ձուլւած էր նրա պատկերը
— և զանգերը վտանգը հնչեցրին և աները
սարսափահար մարդկանց գուրս ժայթքեցին .
այդ նա էր ! Այժմնա աշտարակի մէջ է, հսկայ,
և աշտարակի մէջ, որ թանձր պատեր և մանր
պատուհաններ ունի . և հսկում են նրան ժողո-
վորի հաւատարիմ զաւակներ, անընդունակ
կաշառւելու, շողոքորթութեան ու դիւթում-
ներին չենթարկւող : Երկիւղը վանելու համար
պահակները խմում են և ծիծաղում և ծխափո-
ղից ուղիղ նրա դէմքին փշում մուխը, երբ նա
իրեններով դուրս է գալիս բանափ ներսը զրօս-
նելու : Որպէսզի նա չը կարողանար կախարդել
անցորդներին՝ նրանք հաստ տախսակով ներ-
քեցից գոցեցին պատուհանները, մինչեւ աշտա-
րակը պատելով, որի վրայ երբեմն զրօսնում էր
նա, և միայն թափառող ամպերը շուրջը դիտե-
լով՝ նրա դէմքին են նայում . Նա զերածում
է աղատ ծիծաղը ստրկական արցունքի . թանձր
պատերի միջից դաւաճանութիւն և մատնու-
թիւն է սերմանում : և մը ին ծաղիկների պէս



նրանք սփռւում են ժողովրդի մէջ, ազատութեան ոսկեղին ծածկոցը արատաւորում, ինչպէս վայրի գազանի մորթի : Ամենուրեք դաւաճաններ ու թշնամիներ : Սահմանների մօտ չիրենց գահորքից վար սողալով՝ հ սւաքում են նոյն տեսակ հզօր ու խորհրդաւոր իշխանաւորներ, և իրենց հետ բերում վայրագ, յիմարացած մարդկանց վոհմակներ, մայրասպաններ, որոնք գալիս են իրենց մըրը — ազատութիւնը մորթելու : Տներում, փողոցներում, անտառների ու գիւղերի անբացատրելի հեռաւորութեան մէջ, ազգային ժողովի գոռող դղեակներում — ամէն տեղ վշշում է դաւաճանութիւնը և մթին ստւերի պէս մատնութիւնը սողում : Վա՛ ժողովրդին : Նրան դաւաճանեցին նրանք, որոնք առաջինը եղան ըմբոստութեան դրօշը բարձրացնող, և նրանց գարշահոտ աճիւնը արդէն դուրս է նետած խարւած գերեզմաններից, և նրանց սև արիւնով արդէն յղբացած է հողը : Վա՛յ ժողովրդին : Նրան դաւաճանեցին նրանք, որոնց նա իր հոգին էր յանձնած . նրան դաւաճանում են ընտրեալները, որոնք ազնիւ դէմքեր ունեն, անկաշառ, խիստ լեզու, և գրպաններ, յայտնի չէ թէ ո՞ւմ ոսկիներով :

Քաղաքը արդէն խուզարկում էին : Հրամայւած էր որպէսզի ցերեկւայ ժամը տասներկուսին ամէն ոք իր տանը գտնւէր, և երբ որոշեալ ժամին զանգը հնչեց՝ նրա չարագուշակ զօղանջները շառաչիւնով թաւալւեցին ամայացած, անշշուկ փողոցներում : Այս ժամանակից, ինչ կանգուն էր քաղաքը՝ երբէք այնտեղ այդպիսի լուրթիւն չէր տիրած . շատրւաննե-

թի շուրջը ամայութիւն է . փակւած են իանութները . փողոցի ամբողջ երկարութեամբ՝ մէկ ծայրից միւսը՝ ոչ մի անցորդ, ոչ մի կառք : Լուռ պատերի տակ սահում են՝ խռովւած, ապչած կատուները . նրանք չեն հասկանում՝ ցերեկն է այդ թէ գիշեր . և այնքան խաղաղ է, որ կարծես լսում է նրանց վազվգուն թաթիկների թաւիշեայ զարկը : Զանգին գանդաղ հարւածներ թաւալում են փողոցներով, ինչպէս անտեսանելի աւելներ, և կարծես աւելում են քաղաքը : Կատուներն էլ թագնւեցին, ինչ որ բանից վախեցած : Ամայութիւննէ, լուրթիւն :

Եւ բոլոր փողոցներում միաժամանակ ելեւում են զինւած մարդկանց փոքրիկ խմբակներ : Նրանք խօսում են բարձր և ազատօրէն ուսները գոփում, և թէև քիչենէնրանք՝ թւում է թէ նրանք աւելի շատ են անհանգիստ աղմուկ արձակում, քան ամբողջ քաղաքը, երբ նրա մէջ հարիւր հազարաւոր մարդիկ և կառքեր են շարժեւում : Խւրաքանչիւր տուն իր հերթով կլանում է նրանց և կրկին դուրս նետում : և նրանց հետ դուրս է նետում նաև մէկ-երկու չարութիւնից գունաւաւած և կատաղութիւնից կարմրած մարդկանց : Նրանք գնում են, արհամարհանքով ձեռքերը գրպանը դրած — այդ զարմանալի օրերում ոչոք մահւանից չէր գախենում, նոյն իսկ դաւաճանները — և չքանում են բանտերի մթին խորութեան մէջ : Տասը հազար դաւաճաններին գտան հայրենիքի հաւատարիմ զինւորները . տասը հազար մատնիչներին գտան նրանք և բանտերը նետեցին, Այժմ բանտերին նայելը հաճելի է և սարսափե-

լի՞ այնքան լեցուն են նրանք ներքենից վերև
մատնութեամբ ու դաւաճանութեամբ! Վախե-
նում ես, որ նրանք չեն դիմանալու և ահա
փլչելու են:

Եւ այդ երեկոյին քաղաքը խրախնանքի մէջ
էր։ Տները նորից դատարկւեցին և փողոցները
դարձեալ լցւեցին, ու սև, անսահման ամբոխ
իրար խառնեց մի օտարոտի, արբեցուցիչ պա-
րի մէջ, սուր ու անսպասելի շարժումների մի
հիւսւածքով։ Պարում էին քաղաքի մի ծայրից
մինչև միւսը։ Հազւագիւտ լապտերների մօտ,
իրեւ փրփրալի մի կոհակ ժայռի արանքին՝ փայ-
լում էին առանձին գոյգեր։ միախառնւած քա-
զուկներ, ծիծաղկոտ դէմքեր, խոշոր աշքեր —
ամէն ինչ, որ չըլան էր անում, չքանում, ու-
րիշով փոխարինուում։ իսկ հեռու, խորութեան
մէջ՝ անորոշապէս ալեկոծւում էր ինչ որ գոր-
շագոյն բան, ձուլւող՝ զատառող, երբեմն պտառւն՝
ինչպէս ջրապտոյտ, երբեմն մըրկոտ՝ առաջ-
ընթաց արագութեամբ, ինչպէս մի յործանք։
Լապտերներից մէկի վրայ ճօնւում էր մի կախ-
ւած, դաւաճանի մէկը, որին չը յաջողւեց մի՝
չև բանտը հասնել։ Ագահօրէն դէպի հողը ճգ-
տող նրա երկարացած ոտներին հասնում էին
պարողների գլուխները, և թւում էր թէ՝ ինքն
էլ էր պարում, որ նա ինքն էր աւագ խմբա-
պեաը, որ զեկավարում էր պարերը։

Այնուհետեւ դիմում էին դէպի սև աշտա-
րակը և գլուխները վեր ցցելով՝ աղաղակում
թանձր պատերի կողմը։

— Մա՞ս Քսաներորդին! Մա՞ս:

Մարտկոցներում փայլվիլում էին տաք, փոք-
րիկ կրակներ։ Փողովրդի զաւակներ էին այդ

որ հսկում էին բռնապետին։ Եւ հանգստանա-
լով, համոգւելով, որ նա այնտեղ է և չի կա-
րող փախչել՝ աղաղակում էին, աւելի շուա-
հանաքի համար, վախեցնելու մտքով։

— Մա՞ս Քսաներորդին։

Եւ հեռանում էին, տեղ տալով նոր աղմ-
կարարներին։ իսկ զիշերը դարձեալ սաւառ-
նում էին քաղաքի վրայ տարօրինակ տեսիլներ
և կուլ տւած, բայց չտարածւած թոյնի նման՝
այրում էին նրա ներսի սև աշտարակներ ու
բանտեր, դաւաճանութեամբ ու մատնութեամբ։
բացւած։

Եւ արդէն սպանում էին դաւաճաններին։
Սրեցին թուրերը, կացիններն ու մանգաղները։
հաստ գերաններ ու ծանր քարեր հաւաքեցին, և
բանտերում երկու օր աշխատեցին, ուժուսպառ
լինելով յոգնածութիւնից։ Քնում էին այն
տեղ, ուր պատահում էր, այնտեղ էլ խմում-
և ուտում։ Հողը այլևս չէր ընդունում պա-
րարտ արիւնը և պէտք եղաւ նրա վրայ յարդ-
ցանել, բայց նա էլ թրջւելով՝ շագանակոյն-
ցեխի վերածւեց։ Եօթը հազար հոգի սպանւե-
ցին։ Եօթը հազար դաւաճաններ հողը իջան՝
քաղաքը մաքրելու և իմանուկ ազտառութեան-
առջև ճանապարհ բանալու համար։

Դարձեալ գնում էին Քսաներորդի մօտ և
նրան ցոյց տալիս կտրւած գլուխներ և կրծքից
դուրս պոկւած սրտեր։ Եւ նա նայում էր
նրանց վրայ։ իսկ ազգային ժողովում շփո-
թութիւն և սարսափն էր տիրապետում։ Քընտ-
ում էին նրան, որ հրամայել էր սպանել, և
նրան չէին գտնում։ Բայց ո՞վ արդեօք հրա-
մայեց։ Դու չե՞ս արդեօք։ Դու չե՞ս։ Դու չե՞ս։

Գայց ո՞վ կարող է հրամայել այնտեղ, ուրիշում է միայն ազգային ժողովը։ Մի քանիսը ժպառում են — նրանք մի բան գիտեն։

— Մարդասպաններ։

— Ո՞չ։ Սակայն մենք ափսոսում ենք հայրենիքը, իսկ դուք ափսոսում եք դաւաճաններին։

Բայց խաղաղութիւնը չի գալիս և դաւաճանութիւնը աճում է և մեծանում, և մինչև ժողովրդի սիրտը թափանցում։ Ի՞նչքան տառապանքներ վրայ հասան, ի՞նչքան արիւն թափւեց և բոլորը զուր անցաւ։ Թանձր պատերի միջով՝ նա — խորհրդաւոր իշխանաւորը շարունակում է դաւերի ու կախարդանքներ ցանել։ Վայ ազատութեան։ Արևմուտքից սոսկալի լուրեր են հասնում ահաւոր պառակտումների — պատերազմների մասին — խելացնոր ժողովրդի մի պոկւած հատւածի, որ զէնք է բարձրացրել իր մայր ազատութեան դէմ։ Հարաւից սպառնալիքներ են սաւառնում։ Հիւսիսից և արևելքից աւելի ու աւելի մօտենում են իրենց գահոյքից վար սողացող իշխանաւորներն ու իրենց վոհմակները։ Ամպերը ո՛ր կողմից էլ լողալու լինեն՝ միշտ լեցուն են թշնամու և դաւաճանների արտաշնչութեամբ։ Քամին ո՛ր կողմից էլ փշելու լինի՝ հիւսիսից թէ հարաւից, արևմտքից թէ արևելքից՝ նա բերում է սպառնալիքի ու զայրոյթի մոմուց, և գւարթօրէն հնչում է նրա՝ ականջին, որ աշտարակումն է վանդակւած, և մահազանդի պէս՝ քաղաքացիների ականջին։ Վայ ժողովրդին։ Վայ ազատութեան։ Դիշերները լուսինը պայծառ է և շողարձակ, ինչպէս աւերսկների վրա,

իսկ արեւը ամէն երեկոյ մառախուղի մէջ է մտնում, և նրան խեղտում են գորշ, վերասլաց ամպեր՝ սապատող, այլանդակ ու հրեշակերպ։ Նստում են նրա վրայ, խեղտում, և ամէնքը միասին, հրդեհւած մի գունդի նման հորիզոնի ետքեն են թաւալւում։ Վերցերը նրան յաջողւեց մէկ րոպէով միայն ճեղքել ամպերը — և ի՞նչքան վշտալի, սարսափահար ու երկչուուագայթ էր այդ։ Շատապող ու քնքոյչ նա կծկւեց ծառերի, տների ու եկեղեցիների կատարներին, նայեց խոշոր, պայծառ ու զարհուրած աչքերով — մթնագնեց, հալւեց ու հանգաւ — և ամպը՝ դուրս ցցւած մի լեռնակատարի նման հեռաւոր ովկիանոսի մէջ գահավիժեց, իր հետ տանելով արեգակին։ Վայ ժողովրդին։ Վայ ազատութեան։

Իսկ աշտարակի վրայ միականի ժամագործը, որին յարմար է ոսպնեակի մէջ նայել՝ շրջում է անիւների ու անիւկների, լծակների ու պարանների միջև՝ և կողքի վրայ գլուխը ծռելով՝ մեծ ճօճանակի շարժումն է գիտում։

— Այդպէս կը լինի — այդպէս էր։ Այդպէս կը լինի — այդպէս էր։

Մէկ անգամ, երբ նա տակաւին երիտասարդ էր՝ ժամացոյցը խանգարւեց և ամրող երկուօր կանգ առաւ։ Եւ այնքա՞ն սարսափելի էր այդ! Կարծես այդ բոլոր ժամանակ ամէն ինչ սկսել էր՝ գահավիժւել յայտնի չէ թէ ո՛ւր, իր ամբողջ անտեսանելի զանգւածով։ Իսկ երբ ժամացոյցը ուղղեցին՝ այնքա՞ն լաւ եղաւ։ Այժմ ժամանակը լողում է մատների միջով, վայր է ընկնում կաթիլ-կաթիլ, կարատւում փոքր մասնիկների և մէկ-մէկ մատնաչափ մի

կողմ նետւում։ Պղնձէ ահագին սկաւառակը գունատ շողում է շարժման միջոցին, և դեղնորակ ցոլմունքով փայլատակում իրեն նոյն շիլ աչքի մէջ իսկ վերը, ինչ որ վանդակապատի քիւի վրայ՝ աղաւնին է զուղում։

— Այդպէս էր — այդպէս կը լինի։ Այդպէս էր — այդպէս կը լինի։

IV

Արդէն կործանւած էր հազարամեայ թագւորութիւնը։ Բաց քէտաւութեան պէտք չէր զգացւում։ ոտի էին կանգնել ամէնքը, ուրոնք ներկայ էին ազգային ժողովում, և նա ծայրէ ի ծայր լցւած էր՝ կանգնած, կարծես բուսած մարդկանցով։ կանգնած էր նաև այն խոշոր երեսփոխանը, որին բազկաթոռի վրայ էին բերած։ իր բարեկամներին կոթնելով՝ նա ուղղեց իր ծեր, անդամալուծւած ոտները և բարձրացաւ, երկար, չորացած մի կոճղի նման՝ երկու նորահաս ծառերի օգնութեամբ կանգուն։

— Հանրապետութիւնը միաձայն ընդունւած է — խօսում է մէկը զիլ ծայնով, անկարող իր հրձւանքը զոպելու։

Սակայն ամենքը կանգնած են։ Անցնում է մէկ-երկու րոպէ։ արդէն հրապարակի վրայ՝ անհամբեր ժողովրդով լեցուն՝ բարձրացաւ որոտանման, ցնծալի մոնչիւն իսկ այստեղ լըռութիւն է ու խաղաղութիւն, ինչպէս եկեղեցու մէջ, և խստադէմ, վաեմօրէն լուրջ մարդիկ՝ մի հպարտ ակնածանքի դիրքում արձանացած։ Ո՞ւմ առջե են նրանք կանգնել։ թա-

գաւորը այլևս չկայ։ չկայ նաև Աստւած՝ երկնքի այդ թագաւորն ու բռնապետը — նա էլ վաղուց կործանւած է իր երկնաւոր գահոյքից։ Նրանք ազատութեան առջեն են կանգնած։ Տարիքոտ երեսփոխանը, որի գլուխը երկար տարիների ընթացքում դողդողում էր ծերութեան դողով՝ այժմ պահում է նրան առոյգ և հպարտ։ ահաւասիկ ձեռքի թեթև շարժումով նա հեռացրեց իր բարեկամներին — կանգնած է միայնակ, ազատութիւնը մի հրաշք գործեց։ Արդէն վաղուց մոռացած էին այդ մարդիկ լաց լինել՝ փոթորկների, ըմբոստութեան և արեան մէջ ապրելով, իսկ այժմ նրանք լաց են լինում։ Արծւային խոժոռ աչքերը, որոնք հանդարտ, առանց թարթելու յեղափոխութեան արիւնոտ արեկին էին նայում, չը կարողացան դիմանալ ազատութեան քնքոյշ շողարձակումին և լաց են լինում այժմ։

Սրահում լրութիւն է տիրում։ Պատուհանների ետևից աղմուկ է լսւում։ Մեծանալով ու ծաւալւելով՝ նա դադարում է սուր հնչելուց։ հաւասար ու ամեկի՝ նա յիշեցնում է անեղրովկիանի մոնչիւնը։ Այժմ այդ բոլոր մարդիկ ազատ են։ Ազատ է մեռնողը, ազատ է նորածինը, ազատ է ապրողը։ Խորտակւած է այն մէկի իշխանութիւնը, որ հազարաւոր տարիներ շղթաների մէջ էր պահում միլիոնաւորներին, տապալւած են բանտի սևաթոյր կամարները, և գլխի վրայ պայծառ երկինքն է սարածւում։

— Ազատութիւն — շնչում է մէկը նեղմուքնքոյշ, ինչպէս իր սիրուկու անունը։

— Ազատութիւն — ասում է մէկը՝ անհուն բերկութիւնից շնչահեղձ — ամբողջովով ծլզ-

տում, ամբողջովին ներշնչում և թոփչք :

—Ազատութիւն—հնչում է երկաթը :

—Ազատութիւն—երգում են լարերը :

—Ազատութիւն—գոռզոռում է ովկիանը :

Նա մեռաւ, ալեւոր երեսփոխ անը : Նրա սիրաց չդիմացաւ անհուն բերկրանքին, և կանգ առաւ և նրա վերջին զարկն էր՝ «ազատութիւն» : Ամենաերջանիկը մահկանացուներից! Նա տանելու է իր հետ դէպի խորհրդաւոր, դամբարանային հանգստարանը մի անվախճան երազ՝ մանուկ աղատութեան մասին :

Քաղաքում սպասում էին խառնակութիւններ, սակայն նրանք տեղի չունեցան : Ազատութեան շունչը ազնացրել էր մարդկանց և նրանք հետ ու քննոյլ էին և իրենց հրճւանքի արտայայտութիւնների մէջ համեստ՝ ինչպէս մաքուր աղջիկներ : Նոյն իսկ չէին պարում : Նոյն իսկ, գրեթէ չէին ել գումա : Միայն իրար էին նայում, միայն իրար էին փայփայում ձեռքերի զգոյշ հպումով . այնքան հաճելի է նայել ազատ մարդուն, նրա աչքերի մէջ նայել ! Եւ ոչ ոքին այլևս չկախեցին : Գտնեցաւ մի անմիտ, որ պոռաց ամրոխին մէջ . — «Կեցցէ՛ Քսաններորդը», ոլորեց բեխերը և պատրաստեց կարճ կուի և երկար հոգեվարքի համար՝ մոլեգնած ամբոխի մահաբեր գրկում : Եւ մի քանիս արդէն խոժոռեցին իրենց դէմքերը, բայց ուրիշները — մեծամասնութիւնը զարմացաւ միայն և հետաքրքրութեամբ սկսեց դիտել ճշացողին, ինչպէս նաւահանգստում յորանջող անգործներ նայում են Բրազիլիայից բերւած մի կապիկին :

Եւ ազատ թողին նրան :

Քսաններորդի մասին ուշ գիշերը յիշեցին : Քաղաքացիների մի խմբակ, որ ամենեւ սին չէր ուզում հրաժեշտ տալ այդ մեծ օրւան և որոշել էր մինչև լուսը թափառել՝ պատահաբար յիշեց Քսաններորդին և դէպի աշտարակը դիմեց : Սկատեսիլ՝ նա գրեթէ ձուլւում էր երկնքի հետ, և նոյն վայրկեանին, երբ քաղաքացիները նրան էին մօտենում, նա կուլ էր տալիս մի աստղ : Փոքրիկ, պայծառ աստղիկը նրան մօտեցաւ, փայլվեց և չքացաւ մութարածութեան մէջ : Գետնից բաւականաչափ ցած լուսաւորւած էին երկու փոքրիկ պատուհաններ . այդ պահապաններն էին, որոնք հըսկում էին արթուն :

Զարկեց երկրորդ ժամը :

—Գիտէ՞ նա արդեօք թէ ոչ—խօսեց շրջիկներից մէկը, զուր նայելով հսկայ սկ շէնքին և ջանալով գուշակել նրա ներսը եղածները : Պատից մի մութ ստեր զատւեց, և ուժասպառ, յոդնած մի ձայն պատասխանեց

— Նա քնած է, քաղաքացիներ :

— Ո՞վ էք դուք, քաղաքացի : Դուք վախեցրիք ինձ . դուք քայլում էք կատուի հանդարատութեամբ :

Զանազան կողմերից առաջ անցան դարձեալ մի քանի մութ ստերներ, և լուռ կանգ առին այցելուների առջն :

— Ինչո՞ւ չէք պատասխանում : Եթէ դուք ուրւականներ էք՝ անմիջապէս գետինն անցէք . ազգային ժողովը արգիլած է ուրւականների երևումը :

Նոյն ուժասպառ անծանօթը պատասխանեց :

— Մենք հսկում ենք բռնապետին :

— Ժողովրդապետութիւնն է ձեզ այդ պաշտօնը յանձնել :

— Ո՞չ : Մենք ինքներս : Մենք այստեղ 36 հոգի ենք : Երեսուն և եօթն էինք, բայց մէկը մեռաւ : Մենք հսկում ենք բռնապետին : Երկու ամիս է, թերեւս աւելի, որ մենք ապրում ենք այս պատերի տակ : Մենք յոդնած ենք .

— Ազգը՝ երախտագիտութիւն է յայտնում ձեզ : Դուք գիտէ՞ք թէ այսօր ի՞նչ կատարեց :

— Այո՛, մի քիչ գիտենք : Մենք հսկում ենք բռնապետին :

— Որ այժմ հանրապետութիւն է — ազատութիւն :

— Այո՛ : Մենք հսկում ենք բռնապետին : Մենք յոդնած ենք :

— Համբուրեւնք, եղբայրնե՛ր :

Սառած շրթունքներ թուլօրէն հպւում են ջերմ շրթունքներին :

— Մենք յոդնած ենք : Նա այնքա՞ն խորամանկ է և վտանգաւոր ! Մենք գիշեր ու ցերեկ նայում ենք բոլոր՝ պատուհաններին և դռներին : Ես նայում եմ ակա այն պատուհանին, դուք այժմ այդ չէք նկատելու : Այդպէս ուրեմն, դուք ասում էք, որ ազատութիւնն է : Դա լաւ է : Բայց մենք պէտք է մեր տեղերը դառնանք : Հանգիստ եղէք, քաղաքացինե՛ր . նա քնած է : Մենք տեղեկութիւններ ենք ստանում իւրաքանչիւր կէս ժամից յետոյ : Նա քնած է :

Ստեղները ճօճւեցին — ետ քաշւեցին — կորան, կարծես պատի մէջ մտան : Աև աշտարակը կարծես աւելի ևս բարձրացաւ, և նրա ձախ ժանիքից դէպի քաղաքը ձգւեց նոյնքան անձև, մըռայլ մի ամպ . թւում էր, որ աշտարակը մե-

ծանում էր և իր բազուկները տարածում : Պատի համապարփակ խաւարի մէջ յանկարծ բոցավառւեց մի կրակ և հանգաւ — մի բան, որ նշան էր ազդանշանի : Ամպը քսդափի վրայ տարածուեց և կրակների ցումունքից զեղուց բարակ անձրես սկսեց մաղել : Հանդարտութիւն էր և անվրդութիւն :

իրաւի քնա՞ծ է նա :

V

Անցաւ գարձեալ մի քանի օր՝ ազատութեան նորանոր և անուշաւէտ վայելքներով — և կրկին, ինչպէս մի սպիտակ մարմարի վրայ սև երակներ՝ ամէն տեղ անվատահութեան ու երկիւղի թելերը երկարեցան : Բոնապետը մի կասկածելի հանդարտութեամբ ընդունեց իր գահազրկումի լուրը : Բայց ի՞նչպէս կարող է հանգիստ լինել այն մարդը, որ կորցրել է իր թագաւորութիւնը՝ եթէ նա ծրագրած չէ մի սարսափելի բան : Եւ ի՞նչպէս կարող է հանգիստ լինել մի ժողովուրդ, եթէ նրա մէջ է ապրում մի առեղծւածային անձնաւորութիւն, կախարդանքի կործանարար ոյժերով օժտւած : Գոհազուրկ եղած՝ նա դարձեալ շարունակում է մնալ նոյնքան սոսկալի . կալ անաւոր՝ նա իր դիւական իշխանութիւնն է երեան հանում, ծաւալելով այն հեռաւոր տեղերում : Այդպէս է նաև երկիրը, որ մութ թւելով մօտիկ մի վայրից՝ մի պայծառ աստղ է երեսում կապոյտ տառածութիւնից նայելիս : Եւ նոյն իւկ մօտերը՝ բաց են լինում նրա տանջանքների վրայ : Տեսնըւած էր մի կին, որ թագուհու ձեռքն էր

համբուրած։ տեսնւած էր մի պահակ, որ իր արցունքն էր սրբած, ունկնդրւած էր մի հռետոր, որ գթասրտութեան կոչն էր արել։ կարծես թէ նոյն իսկ այժմ նա աւելի երջանիկ չէր այն հազարաւորներից, որոնք երբէք լոյսը տեսած չէին և որոնց կրկին և կրկին անգամ ուղում էին նրա համար ողջակիզել։ Ո՞վ պէտք է երաշխաւոր լինի, որ երկիրը դարձեալ իր անցեալ խելացնորութեան չէ վերադառնալու, և ծունկի վրայ սողալով նրանից ներում չէ պաղատելու, և կրկին չի բարձրացնելու այն դահը—որ կործանւած էր այնքան դժւարութեամբ ու այնքան ցաւերով։

Քսանելով մոլեգնութիւնից և երկիւղից՝ բազմամիլիոն ժողովուրդը հետևում է ազգային ժողովի ատենաբանութիւններին։ Օտարութիւնը, որոնք վախեցնում են դարձեալ։ Խօսում են նրա անձեռնմիելիութեան մասին —և այն, որ նրան չի կարելի դատել, ինչպէս ուրիշներին են դատում, որ նրան չի կարելի պատճել, ինչպէս բոլորին են պատճում, որ նրան չի կարելի մահացնել, որովհետև նա մի թագաւոր էր։ Եւ խօսում են այդ ժողովրդի և ազատութեան համար իրենց սիրովը երդւելով, խօսում են այն մարդիկ, որոնց ազնութիւնը ճանաչւած է ամենքից, բռնապետութիւնը առղներ, ազգի զաւակներ, նրա ստորնաշխարհի խորքերից ելած, այնքան տանջանքներ տեսած՝ թագաւորների անողոք ու սրբապիղծ իշխանութեան պատճառով։ Զարագուշակ կուրութիւն։

Արդէն մեծամասնութիւնը յարւում է գահազուրկի կողմը—ինչպէս դեղնագոյն մի ամպ,

որ աշտարակից ելնելով՝ ներս է խուժում ժողովրդական գիտակցութեան սրբազան ապարանքների մէջ, կուրացնում է պայծառ աչքեր, և խեղդում է նորածին ազատութիւնը—այն դեռատի նորահարսին՝ սպիտակ ծաղիկներս վզարդարւած, որ մահ է ընդունում ամուսնական արարողութեան ժամին։ Վիշտը և յուսահատութիւնը սրտերի մէջ են սողում և բազմաթիւ ձեռքեր տենդուտութեամբ՝ զէնքեր են շօշափում։ աւելի լաւ է Բրուտոսի հետ մեռնել, քան ապրել Օկտավիանոսի հետ։ Վերջին բացականչութիւնները լեցուն են մահաբեր վրդովմունքով։

— Դուք ուզում էք, որ երկրում միայն մէկ մա՞րդ լինի և ՅՅ միլիոն անասուննե՞ր։

Այո՛, նրանք ուզում են։ Նրանք լուռ են, աշքերը խոնարհեցրած։ Նրանք յոգնած են պայքարից, յոգնած են բաղձալուց, և նրանց յոգնածութեան մէջ, նրանց անգոյն, բայց մագնիսացնող սառը ճառերում արդէն նշմարւում է գահի պատկերը։ Առանձին բացագանչութիւնները գունատ բառեր են և միաձայն դաւաճանութեան կոյր լուռութիւն։ Մեռնում է ազատութիւնը—հէտ նորահարսը սպիտակ ծաղիկներով զարդարուն, որ մահանում է ամուսնական արարողութեան ժամին։

Բայց—ս'ս'... Ոտների դոփիւն է լսւում։ Գալիս են կարծես տասնեակներով հսկայ թմբուկներ վատանգի մի թաւ թըմբ-թըմբոց են բարձրացնում։ թըմբ-թըմբ-թըմբ։ Գալիս են արւարձանները։ թըմբ-թըմբ-թըմբ։ Գալիս են ազատութիւնը պաշտպանելու! թըմբը՝ոռ-թըմբը՝ոռ-թըմբը՝ոռ! Վա՛յ մատնիչներին,

ԹԸ'մբ-ԹԸ'մբ-ԹԸ'մբ : Վա՛յ դաւաճաններին :
ԹԸ'մբը՝ ոռ-ԹԸ'մբը՝ ոռ-ԹԸ'մբը՝ ոռ :

-- Ժողովուրդը թոյլաւութիւն է խնդրում
ազգային ժողովի առջևն անցնելու :

Սակայն միթէ կարելի՞ է արգիլել լավայի
հոսանքը : Ո՞վ կարող է յանդգնել ասելու երկ-
րաշարժին—մինչև այստեղ հողը քեզ է պատ-
կանում, բայց մնացածին չդիպչես !

Բացւում են դռները . ահաւասիկ նրանք—
արւարձանները : Հողագոյն դէմքեր : Մերկա-
ցած կրծքեր : Գոյնգոյն ցնցոտիների մի ան-
վերջ ֆանտազիա, որ հագուստի տեղ է ծա-
ռայում : Շարժումների անցուսազ կրցոտ ոգեո-
րութիւն : Խառնաշփոթութեան մի չարագու-
շակ կարգականոնաւորութիւն : մի քայլող քա-
ռօս : ԹԸ'մբ-ԹԸ'մբ-ԹԸ'մբ : Աչքեր՝ կրակներով
փայլվլուն : Նիզակներ, մանդաղներ, եռ-ժա-
նիներ : Ցանկապատի ցլցեր : Տղամարդիկ, կա-
նայք, մանուկներ : ԹԸ'մբ-ԹԸ'մբ-ԹԸ'մբ :

— Կեցցե՞ն ժողովրդի ներկայացուցիչները :
Կեցցէ՛ ազատութիւնը : Մա՛կ դաւաճաններին :

Երեսփոխանները ժպտում են, խոժոռուում
են, սիրալիիր բարեռում : Մարդու գլուխը սկսում
է դառնալ այդ խայտաբղէտ, անվերջ շարժու-
մից . կարծես մի արագահոս գետ սաւառնում
է քարանձաւի միջով : Բոլոր դէմքերը սկսում
են իրար նմանւել . բոլոր աղաղակները միա-
խառնւում են մի համատարած, միանման մը-
ռնչիւնի մէջ . ոտների դոփիւնը սկսում է տա-
նիքի վրայ թափւող անձրսի ձայնին նմանւել
—քննեցնող, կամքը անդ ամալուծող . գիտակ-
ցութեան մէջ թափանցող : Հսկայական տանիք
հսկայական կաթիւներ :

— ԹԸ'մբ-ԹԸ'մբ-ԹԸ'մբ :

Անցնում է մէկ ժամ, անցնում են երկուն
երեք ժամ : Հստ երեսութիւն՝ գիշերը արդէն վրայ
է հասել : Վառւում են բոսորագոյն—կարմիր
կրակներ : Երկու ճեղքերն էլ—և այն, որտեղից
ժողովուրդը ներս է հոսում, և այն, որտե-
ղից չբանում է՝ սև են, ինչպէս երկու գազա-
ային երախներ . կարծես սև, հալւող երկա-
թի ու պղնձի ժապաւէն քաշ է տրւում մէկ ե-
րախից գէպի միւսը : Յոգնած աչքերին տեսիլ-
ներ են գծագրուում . երբեմն մի անվերջ գօտի,
երբեմն մի ուռած, մազոտ որդ : դռների վրայ
նստածներին թւում է, որ իրենք կամուրջի վը-
րայ են և սկսում են լողալ : Լինում են նաև
րոպէներ, երբ գիսակցութիւնը պայծառանում
է և անբնականօրէն կենդանանում : ուրեմն՝ այդ
ժողովուրդն է այնտեղ ! Եւ հպարտութիւնը, և
ոյժի գիտակցութիւնը և մի մեծ, տակաւին չը
տեսնած ազատութեան ծարաւ է յայտնւում :
Ազա՛տ ժողովուրդ—որպիսի՝ երջանկութիւն :

— ԹԸ'մբ-ԹԸ'մբ-ԹԸ'մբ :

Արդէն ութը ժամ է, ինչ նրանք անցնում
են և դեռ ևս իրենց վերջը չի տեսնուում : Եր-
կու ծայրերից էլ—այնտեղից, որի միջով մա-
նում է բազմութիւնը, և այնտեղից, ուր ան-
հետանում է՝ որտուում է յեղափոխական երգը :
Բառերը հազիւ են լսուում . պարզ հնչում են
միայն եռաժշտական տակտերը, ելեկջները, ա-
կընթարթային լոռութիւնն ու գոռող բռնկում-
ները : Ի զէ՞ն, բաղաքացինե՛ր : Գումարտակնե՛ր
կազմեցէք : Գնա՞նք, գնա՞նք :

Քւէարկութեան պէտք չկայ : Մի անգամ
ևս փրկւած է ազատութիւնը :

VI

Վրայ հասաւ թագաւորի դատավարութեան մեծ օրը։ Խորհրդաւոր իշխանութիւնը, հին՝ որպէս ինքը աշխարհը՝ այժմ բացարութիւն պիտի տայ ժողովրդին, որին ստրկացրած էր հագարաւոր տարիներ, աշխարհին՝ որի նախատինքն էր եղած, ինչպէս մի յաղթանակող անմտութիւն։ Միմոսական զարդ ու զարդարանքներից և ոսկեզօծ գահից զրկւած՝ մեծագլորդ ափառուներ և տիրապետութեան ըովուր տարօրինակ խորհրդանիշները կորցրած, մերկացւած՝ այժմ նա ժողովրդի առջևը պիտի կանգնի և պարզօրէն պատասխան տայ թէ՝ ինչո՞ւ ինքը իշխանութիւն էր, ի՞նչ բան իրեն ոյժ և իրաւունք տւեց յանձին մէկ մարդու՝ «Հրամայել» միլիոնաւորներին, անպատիծ չարիք ու բռնութիւն գործել, զրկել ազատութիւնից, մաս և վիրաւորանք պատճառել։ Քսաններորդը նախապէս դատապարտած է բոլոր ժողովրդի խղճով։ Նրան ներում չկայ և չի կարող լինել—սակայն գլխատումից առաջ թող նա ցուցադրէ իր խորհրդաւոր հոգին, թող մարդկանց ծանօթացնէ — ոչ իր գործերի հետ — նրանք ամենքին էլ յայտնի են — այլ թագաւորների մտածմունքների և զգացումների հետ։ Առասպելական վիշտապը, որ աղջիկներին էր լափում և երկիրը զարհուրանքի մէջ պահում՝ շղթայւած է, քաղաքային հրապարակի վրայ քարշ տրւած, և այժմ իսկ տեսնելու են մարդիկ նրա թեփաւոր թիկունքը, նրա կրկնակի լեզուն, նրա անողորմ երախը՝ որ բոցեր է արտաշնչում։

Վախենում էին ինչ որ մի բանից։ Արդէն գիշերւանից սկսած լուռ փողոցերով զօրքեր

էին շարժւում, հեղեղելով հրապարակներ, անցքեր, թագաւորի անցնելիք ամբողջ ճանապարհը սւինների հսկայ մի վրձինով հագցնելով, պատեր կանգնեցնելով մռայլ, խորհրդաւոր դաֆան դէմքերից։ Շէնքերի և եկեղեցիների սև կիսաստւերների վրայ, սրածայր և քառակուսի, որոնք օտարօտիօրէն անորոշ էին թւում նախարշալուսային աղջամուղջի մէջ՝ թեթևորէն փայլիեց ամպածածկ, գեղնորակ երկինքը, հին՝ ինչպէս տները, կեղտով ու ժանգով ծածկւած։ Կարծես մի պատկեր լինէր, ասպետական հին դղեակի մութ սրահներից մէկում։

Քաղաքը քնած էր, մայլօրէն սպասելով ահաւոր և մեծ օրւան, իսկ փողոցներում, ոտների ծանր դոփիւնը զսպելով՝ կամպց շարժւում էին քաղաքացիների կանոնաւոր շարքեր, որոնք գինւորների էին ձևափոխւել։ անամօթ գոռգոռոցով, կղակները հողին թեքած սողում էին թնդանօթները, և նրանցից իւրաքանչիւրի մօտ կարմրագոյն բոցով շողում էր վասւած մի պատրոյգ։ Հրամանները արւում էին կցկըտուր, կիսաձայն, գրեթէ շշուկով — կարծես վախենում էին արթնացնել յայտնի չէ թէ ում, որ քնած էր անշարժ և կիսարթուն։ Վախենում էին արդեօք թագաւորի, նրա ապահովութեան համար, թէ վախենում էին հէնց իրենից — թագաւորից՝ այդ ոչ ոք չև գիտէր։ Բայց ամենքը գիտէին, որ պէտք է պատրաստւել, պէտք է կանչել և համախմբել այն բոլոր ոյժերը, որ միայն ժողովուրդն ունէր։

Երկար ժամանակ ցերեկը չէր ծագում։ Եիտ, գեղնացոյն ամպեր, աղւամազոտ, աղտոտ և կարծես թրջւած փալասով ներկւած։

յամառութեամբ կախւած էին մմում զանգաւ-
կստների վրայ. և միայն այն միջոցին, երբ
թագաւորը դուրս էր գալիս աշտարակից՝ մի
կապոյտ ճեղքւածքի միջից փայլատակեց արեւը:
Երջանիկ նախանշան ժողովրդին, չարագ ուշակ
նախանշան բռնապետին:

Նրան տանում էին այսպէս — զինորների
խիռ, անքակտելի գծերից կազմւած նեղ միջ-
անցքի միջով շարժւում էին զինւած խումբերը.
Մէկ, երկրորդ, տասներորդ — անկարելի էր
համրել: Այնուհետև հրացանների, սրերի և
սւինների խիտ գրկի մէջ հազիւ շարժւում էր
մի կառք: Եւ դարձեալ թնդանօթներ և զօ-
րամասեր: Եւ բազմամղոն ճանապարհի ամբողջ
գծի վրայ, կառքի թէ առջև, թէ ետև և թէ
չուրջ լոռութիւն էր տիրում: Մէկ տեղ, հրա-
պարակի վրայ՝ լսւեցաւ մի քանիսների անվըս.
տահ աղաղակը:

— Մահ Քսաններորդին:

Բայց չարձագանքւելով ժողովրդից՝ կոտ-
րատւելով լոեց: Այդպէս է նաև վարագ հա-
լածելիս. մռմռում են լակոտներ. իսկ նրանք,
որոնք պէտք է պատառոտեն և պատառոտւեն՝
լոռում են, իրենց ատելութիւնն ու ոյժը կու-
տսկելով:

Ազգային ժողովում զապւած աղմուկ և խօ-
սակցութիւններ: Արդէն մի քանի ժամ է, ինչ
որ սպասում են նրանք այնքան դանդաղորէն
սողացող բռնապետին, և գրգւած ման են
գալիս նրբանցների մէջ, ամէն մէկ րոպէից
տեղերը փոխում, ծիծ աղում առանց պատճա-
ռի, ինչ որ քանի մասին շաղակրատում: Բայց
չատերը նստած են անշարժ, քարեղին արձան-

ների նման. քարին են նմանւում նրանք նաև
իրենց դէմքերով: Երիտասարդ դէմքեր, ոայց
հին, խորունկ կնճիռներով, կարծես կացինով
ճեղքներած: Կարծր մազեր. աչքեր՝ երբեմն
շարացուշակ կերպով գտնկի խորքը քոշւած,
երբեմն ջղաձգութեամբ առաջ դուրս ընկած,
լայն, բազմաբովանդակ, կածես թերթերունքից
զրկւած — ջահեր՝ բանտային սև խուցերի մէջ:
Աշխարհի մէջ չկայ մի սարսափելի բան, որի
վրայ այդ աչքերը կարող լինէին սարսուոով
նայելու, աշխարհի մէջ չկայ որևէ դաժան,
վշտալի, ուրւականի պէս կիսամութ բան, որին
առջև դողդողար այդ հայեացքը, յեղափոխու-
թեան դարբնոցում սպիտակելու չափ տաքա-
ցրած: Նրանք, որ առաջին անգամ այս հոյա-
կապ շարժման հիմը դրին՝ վաղուց մեռած են,
ցրւած են երկրի ամէն կողմերը, մօռացւած
են, մոռացւած են իրենց մտքերը, զգացողու-
թիւններն ու անուրջները: Նրանց անցեալ ճա-
ռերի որոտը մանկական խաղալիք է այլևս թը-
ւում: Նրանց մեծանուն ազատութիւնը, որի
մասին երազներ էին տեսնում՝ երեխաների ան-
կողին է երեսում, ճանճերից ապահով մնալու և
արեից պաշտպանելու համար մի նուրբ վարա-
գորով շրջափակւած: Փոքրիկ, զարմանալի
մարդիկ թզուկներ, որոնք լեռան հիմն էին
քերել: Իսկ որանք՝ փոթորիկների մէջ են մե-
ծացած և փոթորիկների մէջ են ապրում: զո-
ռոզ օրերի սիրասուն զաւակներ — գլխատւած
գանկերի, որոնց ցցերի վրայ են շրջեցնում, ինչ-
պէս դողմներ. մսոտ, շրթնաւոր սրտերի, ո-
րոնցից արիւն են քամում: տիտանական, հղօր
ատենախօսութիւնների, որոնց մէջ խօսքը սը-

րից աւելի կտրուկ է, և իմաստը աւելի անողոք քան վառող : Տիրապետող ժողովրդի կամքին միայն հնազանդ՝ նրանք գուրս կանչեցին խորհրդաւոր իշխանութեան ուրւականին — այժմ, սառը՝ ինչպէս գիտուն մարդաբաններ, ինչպէս դատաւորներ, ինչպէս դահիճներ՝ նըրանք քննելու են նրա կապոյտ փայլարձակումը, որ վախեցնում էր տգէտներին և նախապաշարւածներին, բաժան-բաժան են անելու նրա ուրւականային անդամները, դանելու են բռնապետութեան սև թոյնը և վերջնական մահացման են նրան ենթարկելու :

Ահաւասիկ պատերի ետև լոռւմ է աղմուկը և խորին լոռւթիւն է տիրում, սև՝ ինչպէս գիշերային երկինքը : Ահաւասիկ դղրդում են թնդանօթները, մօտենալով այդտեղ՝ Եւ լոռւմ են : Մուտքի մօտ թեթև շարժում է սկսում: Ամենքը նստած են — նրանք պէտք է որ նստած մնան, բռնապետին ընդունելիս: Փորձում են պաղարիւն երեալ: Հնտում է շէնքի մէջ տեղաւորւող զօրամասերի ծանր գոփիւնը, զէնքի մեղմ շառաչիւնը: Պատերի ետև թնդանօթները վերջին անգամ գոռգոռում են: Երկաթէ մատանիով նրանք շրջափակում են շէնքը, նրա արտաքին մասը՝ ամբողջ աշխարհի հանդէպ — արև լուտքին և արեելքին, հիւսիսին և հարավին:

Մի ինչ որ փոքրիկ բան ներս մտաւ:

Վերին, հեռաւոր աթոռներից նա թւում է հաստիկ, ցածրահասակ մի մարդուկ՝ արագ բայց անվստահ շարժումներով: Մօտից գիտելիս՝ նա միջահասակ գիրուկ մէկն է. մեծ, ցրտից կարմրած քթով, այտերի վրայ կախւած

մորթիով, փոքրիկ, անփայլ աչքերով — բարեսըրտութեան, ոչնչութեան և յիմարութեան աչքառու մի խառնուրդով: Նա իր շուրջն է նայում, չը գիտենալով, թէ պէտք է արդեօք բարեկել թէ ոչ, և թեթեակի բարեկ տալիս: Կանգնած է անվճռական ձեռվ, ոտները իրարից հեռացրած, չը գիտենալով, կարելի՞ է արդեօք նստել թէ ոչ: Բոլորը լուռ են, բայց նրա ետեւ մի աթոռ է դրւած, ըստ երկութիւն նրա համար և նստում է, նախ մի քիչ և յետոյ աւելի պինդ և ընդունում է մի փառահեղ երեսոյթ: Երեւում է որ նա հարբուխ ունի: Ծտապով նա դուրս է քաշում մի թաշկինակ և երկու անդամ փոշտացնում, ամեն անդամ քթից սուր: Փողի պէս մի ձայն արձակելով: Ծտկը-ում է, թաշկինակը թագցնում և վեհաշուքօրէն անշարժանում:

Դա նոյն ինքը Քաներորդն էր:

Սպասում էին թագաւորին, բայց յայտնւեցաւ մի խեղկատակ: Սպասում էին մի գիտպի, իսկ եկաւ քթուտ մի բուրժուա, թաշկինակը գրպանում: Ծիծաղելի է և զարմանալի, և մի քիչ էլ ճնշիչ: Արդեօք նա փոխանակւած չէր մէկ ուրիշով:

— Այդ ես եմ, թագաւորը, — խօսում է Քըսաներորդը:

Այ՛ո, այդ նա է: Ինչքա՞ն ծիծաղելի է: Ահաւասիկ և մի թաշաւոր! Ժպտում էին, ուսերը թոթւում, հազիւ զսպում էին իրենց ծիծաղը և մէկ ծայրից միւսը իրար զրկում ծաղրական ժպտներ և հաճոյսկան նշոններ: Կարծես հարցնում էին.

— Լա՞ւ է: Երեսփոխանները շատ լուլջ էին,

նոյն իսկ գունատ . երևում էր որ նրանք ճշնցւած էին պատախանատւութեան զգացումից , բայց ժողովուրդը լուր՝ զւարձանում էր : ի՞նչպէս յաջողւեց նրանց ներս սպրդւիլ . Ազգային ժողովի մէջ : Նոյն ձեռվ , ինչպէս հոսում է ջուրը , նա թափանցեց բարձր պատուհանների միջով՝ ինչ որ ճեղքերով : Հարիւրաւոր պատառուած , դոյնզգոյն և ֆանտաստիք կերպով հագնւած , բայց չափազանց բարեհամբոյր և քաղաքավարի անծանօթներ : Ճնշելով երեսն փոխաններից մէկին՝ նրանք հարցնում էին .

— Ես ձեզ չեմ խանգարելու , քաղաքացի :

Շատ բարեկիրթ են : Թուչունների նման ամբողջ մութ բոյններով նրանք փակչում են պատուհաններին , լոյսի մուտքը խանգարելով , և ձեռքերով վարը դէպի հրապարակ ինչ որ հեռագիրներ են ուղարկում , երեսում էր որ շատ ծիծաղելի բան :

Բայց երեսփոխանները լուրջ էին , շատ լուրջ նոյն իսկ գունատ : Խոշորացոյցի ապակիների պէս նրանք իրենց աչքերը Քսաններորդի վրայ նեղարձնում , նայում են երկար ու տարօրինակ ձեռվ և մոայլութեամբ հայեացքը դարձնում նրանից : Մի քանիսը բոլորովին գոցած են աչքերը . երեսում է , որ նրանք զգուում են բոնապետի վրայ նայելուց :

— Քաղաքացի-երեսփոխան , ուրախ սարսակը չնշում է հաճոյադէմ անծանօթներից մէկը-նայեցէք , ի՞նչպէս շողլողում են բոնառորդաչքերը :

Զը բարձրացնելով կախւած կոպերը՝ պատախանում է .

— Այ'ո :

— Նա յղբանում էր մեր արիւնը իմելով :
— Այ'ո :

— Բայց գուք շատախօսի մէկը չէ՞ք , քաղաքացի :

Լուսթիւն : իսկ ներքեւ , Քսաններորդը արդէն ինչ որ բան է մռմռում : Նա չի հասկանում , ի՞նչ բանում կարելի է իրեն մեղաղբել : Նա միշտ սիրում էր իր ժողովրդին , և ժողովուրդը սիրում էր նրան : Եւ այժմ էլ նա իրում է իր ժողովրդին , չը նայելով իրեն ուղղւած բոլոր վիրաւորանքներին , և եթէ կարծում են որ ժողովուրդի համար հանրապետութիւնը աւելի լաւ է՝ թո՛ղ հանրապետութիւն լինի . նա ոչ մի հակառակութիւն չունի դրա դէմ :

— Բայց գու ի՞նչու ուրիշ բռնապետներին քեզ օգնութեան կանչեցիր :

— Ես նրանց չը կանչեցի . նրանք իրենք պիտի գային :

Պատախանը կեղծ է . մի ծածկարանում փաստաթղթեր են գտնւած , որոնք հաստատում են բան սկզբութիւնների գոյութիւնը : Բայց նա շփոթւում է , կոպտաբար և յիմարութեամբ , ինչպէս առաջին պատահական սրիկայ , խարին գախութեան մէջ ամբաստանւած : Նա նոյն իսկ վիրաւորում է . իսկապէս նա միշտ ժողովրդի մասին էր մտածում : Ճիշտ չէ թէ նա անգութ մասին էր մտածում : Ճիշտ չէ թէ ներել , է . նա միշտ ներում էր , ում կարելի էր ներել , ճիշտ չէ թէ նա կործանեց պետութիւնը . նա ճախսում էր իր պէտքերի համար այնքան քիչ : Ժախսում էր իր պէտքերի համար այնքան քիչ : Որքան իւրաքանչիւր ոչ-հարուստ բուրժուած նա երբեք ոչ անբարոյական եղած է , ոչ զեղիս նա սիրում է Յոյն և Լատինական դասական գրողներին և հիւսնութիւն , նրա աշխատասենեած

կի ամբողջ կահ-կարասին նա իր ձեռք երւվ է շինած : Ճիշտ է այդ : Եւ եթէ ուշադրութեամբ նայել, նա երեսյթով էլ մի համեստ բուրժուա է թւում . այդպիսի գիրուկներ, մեծ քիթերով, որոնք փողի ճայն են արձակում՝ շատ կարելի է տեսնել աօն օրերին գետի եղելքին ուր նրանք ամբողջ ժամերով ձուկ են որսում : Անշան, ծիծաղելի մարդիկ, մեծ քիթերով :

Բայց և նա մի թագաւոր էր : Այդ ի՞նչ է նշանակում : Այն ժամանակ ամէն մարդ էլ կարող է թագաւոր լինել : Այն ժամանակ մարդկանց վրայ մի անսահման հրամայող կարող է լինել և մի հօրի՞լլա : Նրան էլ ոսկեզօծ զահի վրայ են բարձրացնելու, նրան էլ աստւածալին պատիւներ են չույցելու, և նա էլ մարդկալին կեանքի օրէնքներ է գծելու, մազոտ մարմով հօրիլլան՝ անտառներում թափառող խղճալի նախամարդը :

Աշնանային կարճ օրը արդէն մօտ է իր վախճանին, և ժողովուրդը անհանգւսութեան նշաններ է ցոյց տալիս . ի՞նչու են բռնապետի գործը այդշափ ճգճգում : Արդեօք մի նոր դաւաննութիւն չէ՝ պատրաստուում : Կիսամություններում իրար են հանդիպում երկու ներկայացուցիչներ, որոնք հեռացել են Ադամին ժողովից : Նրանք նայում են, ճանաչում իրար և անձայն սկսում են քայլել, լայտնէ չէ թէ ինչո՛ւ՝ խուսափելովիրար հպւելուց, քայլում են :

— Բայց ո՞ւր է բռնաւորը—անսպասելի բորբոքում է մէկը, միւսի ուսը բռնելով : Ասանձ, ո՞ւր է բռնաւորը :

— Զը գիտեմ : Ես ամաչում եմ վերադառնալ այնտեղ :

— Սոսկալի՛ մտքեր : Մի՞թէ ոչնչութիւնը ինքնին բռնապետութիւնն է : Մի՞թէ ոչինչ մարդիկ բռնապետներ իսկ են :

— Զը գիտեմ : Ես ամաչում եմ :

Փոքր սենեակում հանդարտութիւն էր տիրում, բայց ամէն կողմից-Ադ գային ժողովից և հրապարակից՝ ուր ամրոխ էր կուտակւած՝ սաւառնում էր միահաւասար աղմուկ : Թերեսամէն մէկը կամաց էր խօսում և միատեղ ստացւում էր մի տարերային գոռգոռոց, հեռաւոր ովկիանի որոտի նման : Պատերի վլայ կարմիր գիծեր և հետքեր էին սահում՝ հաւանական էր որ ներքեւ, պատուհանների ետև ջահեր էին վառւում : Մօտիկ մի տեղ լսւեց ոտների ծանըր դոփիւն, և զէնքի մեղմ շառաչիւն . պահանքին էին փոխում : Մէկին հսկում էին, նրան արդեօք :

— Նրան երկրից դուրս պէտք է քշել :

— Ո՛չ : ժողովուրդը թոյլ տալու չէ : Նրան պէտք է սպաննել :

— Բայց չէ՞ որ այդ էլ մի նոր խարդ ախութիւն պիտի լինի :

Պատի վրայ թրթոում են բռսորագոյն հետքեր, սողում, և աղօտ, ծխային սուերներ են քեր, սողում, և աղօտ, ծխային սուերներ են անցեալի և ներկայի արիւնոտ օրերը : Հրաեանցեալի անձայն սկսում են քայլել, լայտնէ չէ, արդէն պարակի վրայ աղմուկը մեծանում է, արդէն լսելի են դառնում առանձին բացականչութիւններ :

— Կեանքիս մէջ ես առաջին անգամ երկիւղ զգացի :

— Եւ յուսահատութիւն : Եւ ամօթ :

— Եւ յուսահատութիւն : Տո՛ւր ինձ ձեռքդ

եղբա՛յր : ինչքա՞ն սառն չ' . այստեղ , աներեւոյթ մի վտանգի հանդէպ՝ մեծ ամօթի այս վայրկեանին երդւանք , որ մենք դաւաճանելու չենք դժբախտ ազատութիւնը : Մենք պիտի ընկնենք , ես այդ գգացի այսօր , բայց ընկնելիս աղաղակենք . . . Աղտութիւն , ազստութիւն , եղբայրներ . . . այնպէս աղաղակենք , որ ստրուկների ամբողջ աշխարհը զարհուրանքից ցնցւի : Աւելի պի՛նդ սեղմիր իմ ձեռքը , եղբայր իմ :

Սաղաղութիւն էր , և պատի վրայ թրթում էին բոսրագոյն հետքեր , և ծխային , անխօս ստւերներ շարժում էին , յայտնի չէ թէ ո՞ւր իսկ պառահանների տակ անդունդը աւելի ու աւելի կառաջորդէնդուռում էր : Կարծես զարհուրելի հողմն էր պոկ եկել , հիւսիսից հարաւից , արևմուտքից և արևելքից , և ոտի էր կանգնեցնել սարսափահար ամբոխը : Երդերը հատ ու կտոր հատւածների մոնչիւնի էին նմանում և ճայների այդ քաօսի մէջ հսկայ ժանիքաւոր գծերով ձեակերպւում էին մի քանի բառեր —

— Մա՛հ մա՛հ բռնապետին :

Նրանք կանգնած էին և լսում էին , և ինչ որ մտածում : Ժմանակը սահում էր , իսկ նըրանք շարունակ կանգնած էին , անշարժացած , կրակների խենթ ու խելառ ստւերների մէջ , և թում էր թէ արդէն հազարաւոր տարիներ նրանք կանգնած էին այստեղ : Հազարաւոր թափանցիկ տարիներ պատում էին նրանց՝ յափտենականութեան մեծ և գոռող լուսութեամբ , ստւերները խելառօրէն ցնցւում էին , թաւալում և պատուհաններին մօտենում , ինչ-

պէս ալեկոծւող ջուրեր : Երբեմն պարզէ է ն կարելի էր լսել ալիքի առեղծւածային ու սիրտմաշուք շեշտը և թաւալուն կոհակի դղրդոցը : — Մա՛հ մա՛հ բռնապետին Շարժում էին :

— Է՛ս , գնա՞նք այնտեղ :

— Գնա՞նք : Յիմա՛ր . . . ես կարծում էի որ այսօրը բռնութեան դէմ մղւած պայքարի վախճանը պիտի լինէր :

— Նա սկսում է միայն : Գնա՞նք : Խաւար միջանցքներ , քարէ սանդուխների աստիճաններ , ինչ որ միանգամայն լուս , պաղ սրահներ , խուլ՝ ինչպէս գետնայարկի նկուղներ — և յանկարծակի փայլառակեց մի լոյս , տաքութիւն զարկեց երեսին , ինչպէս շիկացած հնոցից , ականջներին հնչեց բազմաթիւ խօսակցութիւնների ձայնը , անկապ և ընդհանուր , կարծես հարիւրաւոր վանդակակ թութակներ խառն ի խուռն խօսում էին , ամէն մէկը առանձին մի բան պատմելով : Ահաւասիկ մի ուրիշ ցած , բացւած դուռ ես , և ոտների տակ ահագին մի փոս , գլուխների մի բազմութեամբ , կիսամութ , ծանրաշունչ օդաղուրկ մոմերի խեղդւող կարմիր լեզւակներ : Մի ինչ որ տեղ խօսում են . . . լսում է ծափահարութիւն . . . խօսողը երկի աւարտեց իր ճառապը :

Անդունդի յատակի վրայ , երկու վառւող մոմերի միջև Քսաներորդն է երեսում : Նա ճակատի սրբում է թաշկինակով , սեղանի վրայ կատը սրբում է անորոշ կերպով ինչ որ թոթոթեքում և անորոշ կերպով իր առաջին պաշտպանովում — նա կարդում է իր առաջին պաշտպանովան զական ճառը : Ինչքան տաք է նա զգում իրեն : Դէ՛ , Դէ՛ , Քսաներորդ , չէ՞ որ դուն թագաւոր

ես : Բարձրացրու ձայնդ, ազնւացրու կացինն
ու դահիճը :

Ո՞չ, մռմռում է նա—իմարը, եղերականո-
րէն լուրջ :

VIII

Թագաւորի գլխատմանը շատերը նայում
էին տանիքների վրայից : Բայց և տանիքներն էլ
այնքան տեղ չունէին, որ բաւէին ամենքին և
շատերը այդ պատճառով չկարող ացան տեսնել՝
թէ ի՞նչպէս են թագաւորներին գլխատում :
Իսկ նեղ, բարձր տները՝ տանիքների տեղ, այդ
օտարոտի, սև, շարժուն մազերով, կարծես թէ
կեանք էին առել . և նրանց բաց պատուհանները
նմանւում էին բաց ու խուր անող սև աչքե-
րին : Տների ետև՝ երկնքի մէջ կախւած էին
բութ և սուր ծայրերով զանգականոցներ, կար-
ծես թէ շատ սովորական բաներ, բայց մօտից
դիտելով՝ նրանց մի քանի գծերն էլ շատ սև
էին թւում և մի տեսակ շարժում էին : Դա
ևս ժողովուրդն էր : Այդ տեղերից արդէն ոչ
ինչ չէր տեսնւում, բայց և այնպէս նրանք նա-
յում էին :

Տանիքներից կառափնարանը շատ փոքր էր
թւում, ինչպէս մանկական մի խաղալիք, նման
երեխաների շուռ տւած սայլակին, կոտրած
ձողերով : Կառափնարանի մօտ գտնւող առան-
ձին մարդիկ ևս—միակ առանձին մարդիկ, ո
րոնք տեսանելի էին մարող հրապարակի վրայ,
քանի որ մասցածը միաձուլւել էր մի անխոր-
տակելի զանգւածի մէջ, ինքնայտուկ գորշ
չեղջակոյակ պէս—առանձին մարդիկ՝ ծիծաղե-

լիօրէն մրջիւններ էին յիշեցնում, ետին ոտիկ-
ների վրայ կանգնած : Ամէն ինչ հարթ էր երե-
ւում, իսկ նրանք դանդաղօրէն և դժւարու-
թեամբ բարձրանում էին անտեսանելի աստի-
ճաների վրայ և աւելորդ շարժումներ գործում :
Եւ այնքան տարօրինակ էր թւում այն, որ տա-
նիքների վրայ կանգնած էին խոշոր մարդիկ,
մեծ գլուխներով, բերաններով և քթերով :
Թմբուկ էին զարկում :

Լողալով կառափնարանին մօտեցաւ մի փոք-
րիկ, սև կառք և երկար ժամանակ այլ ես ոչինչ
չէր կարելի տեսնել : Այնուհետև նրանից զսու-
ւեց մի խմբակ և շատ դանդաղ սկսեց անե-
րեոյթ աստիճաններով դէպի վեր բարձրանալ :
Նա մասերի բաժնւեց, սողալով ցըւեց և մէջ
տեղը փոքրիկ մէկը մնաց :

Թմբուկ էին զարկում : Մարդու սիրտը սկը-
սում էր նւազել : Յանկարծ թմբուկների թըռ-
թըռոցը լուց խոպոտ, ընդհատւած հնչիւնով :
Լուսթիւն տիրեց : Միայնակ կանգնած փոքրիկ
մարմինը իր ձեռքը բարձրացրեց, իջեցրեց, նո-
րից բարձրացրեց : Հաւանական է որ խօսում
էր, բայց ոչինչ չէր կարելի լսել : Ի՞նչ է նա
խօսում : Ի՞նչ է նա խօսում : Թմբուկները դղր-
դացին, ճռճռացին, ծաւալեցին իրենց ձայնե-
րը, օդը միլիխարդաւոր մանր, դողդողացող
մասնիկների կոտրատելով, որոնք չէին թող-
նում նայել :

Կառափնարանի վրայ շարժում էր տիրում :
Փոքրիկ մարմինը չքացաւ : Գլխատում են : Դը-
ղրդում են թմբուկները և յանկարծակի լուսւ
են նոյն խոպոտ, ծաւալուն ուղղութեամբ : Լը-
ռութիւն է : Նոյն տեղ, ուր քիչ առաջ Քսանե-

ըորդն էր կանգնած՝ մի նոր փոքրիկ մարմին է երեսում՝ առաջը մեկնած ձեռքով։ Իսկ ձեռքին նա մի շատ փոքրիկ բան է բռնած՝ պայծառ մէկ կողմից և մութ միւս կողմից, ինչպէս գնդասեղի գլխիկ, երկու գոյնով ներկւած։ Դա հէնց ինը թագաւորի գլուխն էր։ Վերջապէս……

.... ինչ որ տեղ փախցրին, ամբոխը ցրւելով և արորելով՝ թագաւորի մարմինն ու զըզուխը՝ դագաղի մէջ դրւած։ վախենում էին որ ժողովուրդի մոլեգնութիւնը չխնայէր նոյնիսկ բռնապետի մնացորդները։ Իսկ ամբոխը ահօնելի էր։ Հինաւուրց ստրկութեան երկիւդուզ ներշշած՝ նա տակաւին չէր ուզում հաւատալ, որ մի այդպիսի բան կարող էր պատահել, որ անձեռնմխելի, անհասանելի, հզօրագոյն իշխանաւորը իր գլուխը թեքեց դահճի կացինի տակ։ — և խելայեղօրէն ու կուրութեամբ նա գրոհ տըւեց կառափնարանի վրայ։ աշքերը յաճախ խարում են, և լսողութիւնը շատ անգամ սուտ է խօսում — պէ՛տք է շօլափել կառափնարանը, պէ՛տք է հոտոտել արքայական արիւնը, մինչև արմուկը նրա մէջ թրջել ձեռքերը։ Կուրում էին, իրար խեղդում, գետին թաւալւում և մանչում։ Մի փափուկ իր, ցնցոտիների կապոցին ման յամառութեամբ գլուրում էր ոտների տակ։ Դա տրորւածի մէկն էր։ Ահա մէկն ևս, ահա մի ուրիշն էլ։ Կառափնարանից մնացած փայտերի կոյտին հասնելով՝ մարդիկ դողդ սջուն ձեռքերով պոկում էին տաշեղներ, եղունգներով ճանկուտում, կոտրատելով նրանց, ագահօրէն և անմտութեամբ յափշտակում էին ամբողջ գերաններ, և ճիշտ նոյն տեղ, մի քանի

քայլի վրայ՝ գետին էին ընկնում, նրանց ծանրութիւնից ընկճւած։ Եւ ամբոխը թաւալւում էր ընկածների գլուխների վրայ, իսկ գերանը ինչպէս մի կենդանի մարմին՝ դուրս էր սահում, լողում էր ինչ որ հոսանքներից քշւած, նորից սուզուում, ցուցադրելով իր ճանկրտաւած ծայրը և մի տեղ անհետանում։ Երբ գտնում էին արեան մի փոքրիկ լճակ, որ հողը տակաւին չէր ծծել և ոտքերի տակ չէր կոխկրտել՝ նըրանով թրջում էին թաշկինակները, հագուստը, շատերը արիւն էին քսում իրենց շրթունքին և ճակատի վրայ անհասկանալի նշաններ գծում — թագաւորի արիւնով ազատութեան նոր թագաւորութեան օծումն էին կատարում։

Վայրենի հրճանքից արբած էին մարդիկ։ Առանց երգի, առանց բառերի պատտում էին, պարի մէջ շնչահեղձ լինելով։ Վազում էին ինչ որ տեղ, դէպի երկինքը մեկնելով արիւնուած ցնցոտիները, հոսում էին քաղաքի մէջ, իրենց հետ տանելով աղաղակ, որոտ, անզսպելի ստարոտի քրքիջ։ Փորձում էին երգել, բայց երգը չափազանց սահուն և չափածոյ էր թւում, եւ վերսկսում էին քրքիջ և աղաղակ։ Գնում էին Ազգային ժողովին շնորհակալութիւն յայտնելու հայրենիքը բռնապետից ազատելու համար, բայց ճանապարհին որևէ դաւաճանի ետևից էին սկսում վազել, որ աղաղակած էր — թագաւորը մեռաւ, կեցցէ՛ թագաւորը, կեցցէ՛ Քը սանեմէկերորդը։ Եւ փախչում էին։ Մի աեղ էլ կախում էին մէկին։

Շատերը նրանցից, որոնք ծածուկ սիրում էին թագաւորին՝ յկարողացան տոկալ այն մտքին, որ նա գլխաւած էր այլևս, և խելագար-

ւեցին . շատերը , նոյնիսկ երկչունները՝ ինքնասպան եղան : Մինչև վերջին րոպէն նրանք ըստասում էին , մի քանի յուսով , և հաւատում էին իրենց աղօթքի զօրութեան : Իսկ երբ գըլխատումը տեղի ունեցաւ՝ նրանք յուսահատութեան անձնատուր եղան և մի քանիսը դաժանորէն և դժգոյն , միւսները կատաղի հայկոյանք-ներ ուղղելով վերին զօրութիւններին՝ դաշոյնահար էին անում իրենք իրենց : Կային նաև այնպիսիներ , որոնք նահատակ լինելու վայրած ծարաւից բռնւած՝ դուրս էին նետում փողոցների վրայ , ժողովրդի սաւառնող լավայի հանդէպ և մոլեգին ձայնով աղաղակում էին . —

— Կեցցէ՛ Քսանևմէկերորդը !

Եւ մեռնում էին :

* * *

Յերեկը մօտենում էր իր վախճանին և քաղաքի վրայ էր տարածում զիշերը — անողոքու արդար գիշերը , որովհետեւ նա աչքեր չունի աեռանելիի համար : Քաղաքում տակաւին լոյս կար՝ վառւող կրակների պատճառով , իւկ կամուրջի տակ գետը սև էր , ինչպէս լուծւած մուր , և միայն այն տեղ , հոսանքի դարձի մօտ ուր լայն , բութ աշտարակի ետև մեռնում էր գունատ ու սառը վերջալոյսը՝ այն տեղ աղօտ կերպով փայլվում էին ալիքները յղկուած մետաղի ցուրտ արտաշողութերով : Կամուրջի վրայ կանգնած էին երկու անձեր և քարին կոթնած՝ նայում էին խորհրդաւոր և մութանդունդի կողմը :

— Հաւապտո՞ւմ ես դուն , որ այսօր աղատու-

թիւն տիրեց—հարցրեց մէկը յած ձայնով , որովհետեւ քաղաքում տակաւին վառւում էին կրակները , իսկ գետը կամուրջի տակ սեանում էր :

— Նայի՛ր , ահա մի դիակ է լողում—ասաց միւսը , ասաց յած ձայնով , որովհետեւ դիակը մօտ էր և դէպի վեր էր նայում լայն դիմագըծի մի կապոյտ հետքով :

— Ես չեմ հաւատում նրանց աղատութեան : Նրանք չափազանց շատ են հրճւում մի ողորմելիի մահւամբ :

Քաղաքից , ուր տակաւին վառւում էին կրակները՝ ծաւալւեց ձայների , ծիծաղի և երգերի դշրդիւն : Այստեղ տակաւին գւարճանում էին :

— Պէտք է մեռցնել իշխանութիւնը—ասաց առաջինը :

— Պէտք է սարուկներին մեռցնել : Իշխանութիւն չկայ—կայ սարկութիւն միայն : Ահաւասիկ մէկ դիակ ես , ահա մէկ ուրիշն էլ : Ինչքան շատ են նրանք : Ո՞րտեղից են նրանք դուրս լողում : Նրանք այնքան յանկարծակի են երկում կամուրջի տակ !

— Բայց չէ՞ որ նրանք սիրում են աղատութիւնը :

— Ո՞չ , նրանք միայն պատուհաններից են վախենում : Երբ նրանք սիրեն աղատութիւնը՝ նրանք աղատ կը դառնան .

— Գնա՛նք այստեղից : Դիակների տեսքից ես վատ եմ զգում ինձ :

Եւ նրանք գարծան՝ հեռանալու մտքով—երբ տակաւին քաղաքում լոյսեր էին վառւում , իսկ գետը սև էր՝ լուծւած մուրի նման—և նը-

բանք տեսան մի բան, ծանր, խառնակ, լոյսից
և խաւարից ծնւած : Վերջալոյսի հակառակ
կողմից, ուր գետը չքանում էր սևաթոյր ե-
ղերքների մէջ՝ և խիտ մթութիւն էր ծանրա-
նում՝ ինչպէս կենդանի՝ շարժում էր մի հըս-
կայ, անձեւ, կոյր բան : Բարձրացաւ և անշար-
ժացաւ, և թէև նա աչքեր չունէր, բայց նա-
յում էր, և թէեւ նա ձեռքեր չունէր՝ բայց նը-
րանց քաղաքի կողմն էր մեկնում, եւ թէև նա
մեռած էր, բայց ապրում էր և շնչում : Սոս-
կալի էր :

— Դա գետի վրայի մառախուղն է—առաց
մէկը :

— Ո՛չ, դա ամպ է—առաց միւսը :

Դա թէ ամպ էր, թէ մառախուղ :

— Նա կարծես նայում է :

Նա նայում էր :

— Նա կարծես լսում է :

Նա լսում էր :

— Նա այստեղ է գալիս :

Ո՛չ, նա կանգնած էր : Նա կանգնած էր ան-
շարժ, հսկայ, անձեւ, կոյր և նրա տարօրինակ
դուրս ցցւած ուռոյցքների վրայ կարմրին էլն
տալիս քաղաքի լոյսերի արտացոլումները, իսկ
ներքեւ, նրա ստների տակ, սև եղերքների մէջ
էր չքանում սև գետը և խաւարը մռմռում էր
ինչպէս կենդանի արարած : Դաժանօրէն օրօր-
ւելով լողում էին այնտեղ դիակներ և մթու-
թեան մէջ էին կորչում, և ուրիշներ անշշուկ
անցնում էին նրանց տեղերը, եւ օրօրւելով հե-
ռանում—անթիւ, անձայն, իրենց հոգսերի մա-
սին մտածելով, նոյնքան սեւ ու ցուրտ, որչափ
իրենց տանող ալիքները :


Իսկ բարձր աշտարակում, որտեղից վաղ ա-
ռաւօտ դուրս էին տարած թագաւորին՝ խորը
քունի մէջ էր միականի ժամագործը, ճօճանա-
կի տակ պառկած : Այդ օրը նա գոհ էր աշտա-
րակում տիրող լոռութեան պատճառով եւ նոյն
իսկ երգում էր—երգում էր միականին—եւ մին-
չեւ մութի վրայ հասնելը, սիրով շրջում էր ա-
նիւների և լծակների միջով : Նա շօշափեց պա-
րանները, փոքրիկ սանդուխի վրայ նսսեց, ոտ-
ները օրօրելով, իսկ ճօճանակին չէր նայում,
այնպէս ցրյց տալով, իր թէ բարկացած է նը-
րա վրայ : Իսկ վերջը կողքից նայեց և ծիծաղեց,
և ուրախացած ճօճանակը քրքիջով պատասխա-
նեց նրան : Ճօճում էր, իր պղնձէ դէմքով լայն
ժպտում և քրքջում :

— Այդպէս էր—այդպէս կը լինի : Այդպէս
էր—այդպէս կը լինի :

— Դէ՛, դէ՛,—քաջալերում էր միականին .
ծիծաղեց թուլանալով :

— Այդպէս էր—այդպէս կը լինի :
Իսկ երբ գիշերը վրայ հասաւ՝ միականին
այդտեղ էլ պառկեց և պինդ քնեց . բայց ճօճա-
նակ քնած չէր և ամբողջ գիշեր նրա վրայ դառ-
նալով՝ օտարոտի երազներ էր նրան հովհարում :





ՀՀ Ազգային գրադարան



NL0311287

ՀՀ Ա.Յ.Բ Ե Ե Խ Ք»-ի Հրատարակութիւնները

1. — ԱՆԴԻՇՈՒԹԻԿԵ, վէպ յոյն յեղ՝ կեանքէ, Ա. Քսէնոսի, թարգմ. Ի. Ա. Երան: Գին՝ \$1.00:
- 2, 3, 4 ապառած:
5. — ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Յ. Յ. Չափմագ ճեանի: Գին՝ 25 սէնթ:
6. — ՀԱՅՐԵՆԻՔ ԵՐԳԱԲԱՆ, գին՝ \$2.50, Տաճք կաստանի համար զեղչած 37.50 դրաւ:
7. — ԹՈՒՍ-Ա. ՅԵՂ. ԾՐԱԳԻՐԸ, թրգմ. Ն. Հան գոյց: Գին 10 սէնթ, Տաճկ. 2 դրաւ:
8. — ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՀԱՄԵՐՍԵԽՈՒԹԵԱՆ ԽԸՆ-ԴԻՐԸ, Ն. Տ. Ս. Ա. Թ.-ի: Գին՝ 25 սէնթ:
9. — ՍՈՅԻԱԼԻԶՄԸ ԵԿ ԴՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵ-ՐԸ; Էնրիկօ Ֆերբիի, թարգմ. Ա. Իորայէլ-ևան: Գին՝ 25 սէնթ:
10. — ԻՄ ԵՂԲԱՅՐ ԳԻՒՂԱՑԻԻՆ, ելիդէ թըքւիւ, թրգմ. Տիկ. Ա. Պաղտասարեան: Գին՝ 5 սէնթ:
11. — ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԵղ ՃԱ-ՆԱՊԱՐՃ, Միքայէլ Նալպանտեանց: Գին՝ 25 սէնթ:
12. — ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՅՔԸ, Վ. Խորէնի: Գին՝ 5 սէնթ:
13. — ԿՐԵՆԳԼՊԻԼ, (Վ.Էպ) Անաթօլ Ֆրանսի, թրգմ. Տիկ. Ա. Պաղտասարեան, Գին՝ 5 սէնթ:
14. — ԶՈՅՐՈՅԹԻ ՕՐԸ, Ա. օնիդ Անդրեէվ, թրգ. Ա. Մ. : Գին՝ 5 սէնթ:
15. — ԻԶՄԻՐԼԻԱՆ, ԱՐԱՐԱՐԱՎԱՅՐԻՆ Մէջ, Կ. Բառմաջեան: Գին 10 սէնթ:
16. — ԵՐԱԶՄ, Յ. Արթուր: Գին՝ 5 սէնթ:
17. — Դէղի ԵՐԿԻՐ, Է. Ակնունի: Գին 10 սէնթ:
18. — ԱՅԴՊԻՍ ԵՐ, Ա. օնիդ Անդրեէվ: թրգ. Ա. Մ. : Գին՝ 10 սէնթ: